№ 44 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԵՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28 № 44

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ **1906** ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 րուբլի։ Փետրվարի 1-ից մինչև 1 յունիսի 3 րուբլի։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի։

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւնը)։ Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“ իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Զարուհի Բաբայեան Խունունցը իր որդիներով և Աննա Բեգլարեան Խունունցը իր որդիներով ցաւօք սրտի յայտնում են իրանց բարեկամներին և ծանօթներին առաջինները իրանց ամուսնու և հօր և վերջինները իրանց տագեր և հօրեղբօր՝

ՄԻՆԱՍ ՄԱՀՏԷՍԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ ԽՈՒՆՈՒՆՑԻ

մահը, որ տեղի ունեցաւ կիրակի, փետրվարի 26-ին։ Յուղարկաւորութիւնը տեղի կունենայ այսօր, երեքշաբթի, առաւօտեան 10 ժամին, իր բնակարանից Միքայէլեան փողոց, տուն Ռէյների № 153) դէպի Կուկիայի Նորաշէն ս. Աստուածածին եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 1—1

Եղիսաբէթ Քոչարեանը իր որդկերանցով, Կարապետ և Արշակ Քոչարեանցները և Սօֆիա Աղոնմակեանը խորին վշտով յայտնում են ազգականներին, ծանօթներին և պաշտօնակիցներին առաջինը իր Թանկագին ամուսնի, երկրորդները իրանց անմոռանալի հօր, երրորդը իր սիրելի եղբօր, չորրորդը հօր և վերջինը իր փեսայի՝

ՄԻՔԱՅԷԼ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՔՈՉԱՐԵԱՆԻ

մահը, որ տեղի ունեցաւ փետրվարի 25-ին։ Հոգեհանգիստը այսօր, փետրվարի 28-ին, երեկոյեան ժամը 6-ին։ Յուղարկաւորութիւնը մարտի 1-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր բնակարանից (Կրասնօգօրսկի փող. № 37) դէպի ս. Կարապետ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 1—2

Պատիւ ունեմ յայտնել յարգելի հասարակութեան, որ այս տարվայ մարտի 1-ից քաղաքի կենտրօնում, Վելեամինօվսկի փողոցում, Իւզբաշևի կանդիտէրսկուն կից բացված է մաքուր և մատչելի ՃԱՇԱՐԱՆ

ԱՆԱՏՕԼԻԱ

Ամսական ճաշողներին տրվում են աբօնիմէնտներ։ Աշակերտներին և գրականագէտներին առանձին զիջում։

Յարգանքով Գասպար Տէր-Յովհաննիսեան

1—3

ԲԺՇ. ԱՐ. ԶԱՐԳԱՐԵԱՆՑԸ

արտասահման գնալու պատճառով դադարեցրել է հիւանդների ընդունելութիւնը մինչև աշուն։ (կ.ե.) 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Տարբեր վերաբերմունք. Վերջին տեղեկութիւններ. Դէպքերը Վրաստանում. Հայ-Թուրքական համագումարը. Ա. Քալանթարի զեկուցումը. Տեղեկութիւններ գաւառից. Ի՞նչ են ասում. Էջմիածնի ճեմարանի օրգանից. Օգնութեան կոչ Ամերիկայի հայութեան. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. Ռուսիկան տեղեկութիւններ. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Եւգենի Րիխտեր. Բօլգարական հայեր և Ռուզվէլտ. Եւրօպան և Ռուսաստանի յեղափոխութիւնը. Արտաքին Լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՏԱՐԲԵՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Հայ Թուրքական խորհրդակցութեան առիթով լսվում են հասարակութեան մէջ շատ տարբեր կարծիքներ։ Մի քանիսը կարծում են, որ նա ոչինչ չի տայ, միւսները ենթադրում են, որ նա կը տայ կարևոր ցուցումներ առաջիկայ գործունէութեան համար։

Մենք այսօր ամենևին մտադիր չենք ոչ տարբեր ակնկալութիւնները բնորոշելու և յայտնելու, որ խորհրդակցութիւնը կը պարզի այս ու այն հարցը և ոչ խօսելու նրա ազդեցութեան մասին հայ-Թուրքական ընդհարումների վրա։ Մենք կանգ կառնենք մի ուրիշ հանգամանքի վրա։

Եթէ մենք նայենք այն խօսակցութիւններին, որ տեղի են ունեցել մինչև այժմ ժողովներում, մենք նկատում ենք մեծ տարբերութիւն հայերի և Թուրքերի աշխարհայեացքների և նրանց դատողութեան եղանակների մէջ։

Թուրքերը հակված են մեծ մասամբ խօսելու կամ հայկական կազմակերպութիւնների, տերրորների և դաւադրութիւնների մասին և կամ առաջ են մղում այնպիսի հարցեր, որոնցով ցանկանում են ձեռք բերել որոշ իրաւունքներ իրանց համար, օրինակ իրաւունքների հաւասարութիւն, դպրոցական գործի մէջ կատարեալ ազատութիւն։

Իսկ հայերի ծրագիրը պտտում է ուրիշ այն հարցերի շուրջը, որոնք առաջացել են հայ-Թուրքական ընդհարումների ազդեցութեան տակ և նպատակ ունեն վերականգնել նախկին դրութիւնը երկրի մէջ ու Թոյլ չը տալ, որ նրանք կրկնվեն։

Թուրքերը օգտվում են ամեն մի դէպքից յայտնելու, որ նրանց կեանքը ճնշված է հայկական կեանքի մի քանի սուր արտայայտութիւններից և որ նրանք պահանջում են սահմանափակել և չքացնել ծայրայեղ կազմակերպութիւնները հայերի մէջ։ Թուրք ներկայացուցիչների յայտարարութիւնները ստեղծել են մի բաւական անախորժ դրութիւն հայ պատգամաւորների համար, որովհետև հայերը միտք չունեն նոյնատեսակ դեր ստանձնելու իրանց վրա և խօսելու Թուրքական հասարակական և կուլտուրական կեանքի այնպիսի արտայայտութիւնների մասին, որոնք արդիւնք են նրանց քաղաքական մտածողութեան և գործողութեան։

Եւ հասկանալի է թէ ինչ պատճառով։

Հայերը լաւ գիտեն, որ իւրաքանչիւր ազգի մէջ կան ամեն տեսակ քաղաքական հոսանքներ և իրանք չեն համակրում որոշ հոսանքների, բայց կարծում են, նրանց մասին քննութիւնը և դատը չը պէտք է կատարել ներկայ խորհրդակցութեան նման ժողովներում։

Մինչև այժմ եղած նիստերից պէտք է եզրակացնել, որ Թուրքերը մինչև այժմ չեն ըմբռնում հայ-Թուրքական ընդհարումներին վերջ տալու գլխաւոր հիմունքները և բաւականաչափ աչօղ կերպով չեն կարողանում վերլուծել կեանքի երևոյթները։ Փոխանակ, փոքր ինչ էլ ինքնաքննութեամբ զբաղվելու և այն Թեզիսը ըմբռնելու, որ իրանց առաջարկած միջոցներով նրանք ոչ մի օգուտ չեն հասցնում խաղաղութեան գործի հաստատվելուն, նրանք ամեն ջանք են Թափում յանցաւոր դուրս բերելու հայերին և մեղադրելու հայ յեղափոխականին, հայ գիւղացուն, հայ հասարակութեան, հայ մամուլին։

Հայերը մի առ մի հերքում են մեղադրանքները և ցոյց տալիս՝ Թէ ինչ խախուտ և կասկածելի հողի վրա են կանգնած Թուրք պատգամաւորները։ Բայց աշխարհահայեացքների և տրամադրութիւնների զանազանութիւնը և էականայի տարբեր հասկացողութիւնները մինչև այժմ չեն կարողացել միախոհութեան հող կազմել երկու ազգերի ներկայացուցիչների մէջ։

Սակայն գործնական տեսակէտից նայելով՝ շատերին հետաքրքրում է այն հարցը Թէ արդեօք Թուրքերը ներկայումս վճռել են հաշտ լինելու և կարգը վերականգնելու մեր երկրում։ Եթէ նայենք Թուրք ճառախօսների հաւաստիացումներին ստացվում է այն տպաւորութիւնը, որ նրանք ներկայումս ցանկանում են խաղաղութիւն, բայց չեն ուզում հասկանալ, որ իրանց առաջարկած միջոցներով միայն զարմանք և տարակուսանք են առաջացնում հայերի մէջ։

Հաշտութիւնը կարող է նրանց համար ցանկալի լինել, իբրև անհրաժեշտութեան պահանջ, և մենք այդ ընդունում ենք, բայց խորհրդակցութեան ժամանակ խառնվել ուրիշ ազգի ներքին կեանքի արտայայտութիւնների, զանազան կազմակերպութիւնների և հոսանքների գործի մէջ—դա աւելի քան տարօրինակ մի երևոյթ է, մանաւանդ, երբ մենք խորհրդակցութեան նիստերում ոչ մի ախորժակ չենք ցոյց տալիս մտնելու նրանց մէջ տեղի ունեցած ներքին շարժումների աշխարհը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Շուլաւէր, փետրվարի 27-ին, 11 ժամ 55 րոպէին, կէսօրից յետոյ։

Փետրվարի 25-ից սկսած մինչև 27-ը Թիֆլիսի նահանգական դատարանը Շուլաւէրում քննում էր Երզնկեանց քանանայի և Հաղբատի տասն և ութ գիւղացիների գործը, որոնք մեղադրվում էին այն բանում, որ դիմադրութիւն էին ցոյց տուել իշխանութիւններին, և պոլիցիական և դատաստանական պրիստաւների և ստրաժնիկների սպանութեան փորձ էին արել։ Նախագահում էր դատարանի նախագահ Լէմմէրման, դատարանի անդամներն էին Մայգուր և Պրիմօ։ Պաշտպանում էին երդուեալ հաւատարմատարներ Տիգրան Յովհաննիսեան, Յովսէփ Ղորղանեան։ Դատարանը վճռեց բոլոր մեղադրվողներին արդարացնել և քրէական հալածանք սկսել ոստիկանական պրիստաւ Ավալօվի և իշխան Բարաթօվի կալուածքների կառավարիչ Զուրաբ Աբդուշէլիշվիլիի դէմ։ Հասարակութիւնը ոգևորութեամբ ընդունեց դատավճիռը։

—

Թելաւ, 25 փետրվարի

«Քաղաքից 12 վերստ հեռաւորութեամբ Կվիրիլի խճուղու վրա կողոպտված և սպանված են մի ոստիկանական ստրաժնիկ և երկու ճանապարհորդ։ Ազգաբնակութիւնը յուզված է կատարված դէպքից»։

—

Գանձակի գարնիզօնի հրամանատար Իսաեէվիչը հրատարակել է մի հրաման, որով մարտ ամսի 1-ից վերացվում են Գանձակի բնակիչներին ուղեկցող պահակախմբերը, իսկ դրա փոխարէն քաղաքի երկու մասերում պահակներ են սահմանվում։ Նորաշէնցիներին, չայլուեցիներին և մօլլաջալուցիներին իրաւունք է տրվում վերադառնալ իրանց աւերված գիւղերը և զբաղվել իրանց գիւղատնտեսական աշխատանքներով։

—

Փետրվարի 24-ին կողոպտուած է ենթարկվել Զանգեզուրի գաւառի Տեղ գիւղի Նօրմալ դպրոցը։

—

Հադրութ, Ջիբրայէլի գաւառ, 23 փետրվարի։

«Ալիեանլու և Մուսուլմանլար ասեւլիս՝ մարդուս երևակայութեան մէջ պատկերանում են մի շարք աւազակային որջեր։ Որքան անհանգստութիւն, սպառնալիք, զրկանքներ չեն կրել այդ աւազակներից այն հայ գիւղերն ու գիւղացիները, որոնք այդ չար ոգիների հարևան լինելու դժբաղդութիւնն են ունեցել։ Աւազակութիւն և մարդասպանութիւն, այդ է նրանց «հաւատամքը»։ Վերջին մի տարվայ արիւնալի դէպքերը խծաբերդցու և հարարեցիների համար նորութիւն չէր. նրանք առաջուց էին խմում դժբաղդութեան այդ դառն բաժակից։ Այդ այդպէս լինելուց յետոյ խծաբերդցի և հարարեցի երիտասարդներից բնականաբար մի խումբ էր կազմվել, որը երբեմն-երբեմն փչացնում էր իրանց անհանգիստ հարևանների ախորժակը։ Մեր կողմերքում ով չը գիտէր Մանասի և իր խմբի մասին. քանի անգամ չէ գրվել լրագիրների մէջ այդ խմբի պաշտպանողական քաջագործութիւնների մասին։ Սակայն այդ խումբն էլ (14 հոգի) այս տարի իր տրագիկական վախճանը ունեցաւ։ Ենթարկվելով բազմահարիւր աւազակների յարձակմանը Հարարի Ջրաղացներից մէկում, Բաշարաթի մօտ, նա իր սարսափելի վախճանը ունեցաւ։

Բաշարաթը Ալիեանլուի ղշլաղներից մէկն է։

Փետրերվարի 16-ին Գօլօշչապօվի մի զօրամասը, բաղկացած կօզակներից և պլաստուններից, ունենալով իր հետ երկու լեռնային Թնդանօթ, դուրս է գալիս Ջիբրայէլ աւանից դէպի այդ կողմերը։

Ճանապարհին այդ զօրամասի օֆիցերները մտնում են Առաքել գիւղը, մի քանի կալերտ են գնում և շնորհակալութիւն յայտնելով գիւղացիներին, որ նրանք խաղաղ են մնացել ընդհարումների ամբողջ ժամանակամիջոցում, միանում են զօրքին։ Ո՞ր հայ գիւղը խաղաղ մնալ չէր ուզի։ Առաքելը ամենամօտիկն է Ջիբրայէլի Թուրքերից և ամենավտանգաւոր տեղերից մէկը։ Առաքելի վրա Թուրքեր չեն յանդգնի յարձակվելու, քաջ իմանալով որ առաքելցին հեշտ կուլ գնացող պատառներից չէ, իսկ առաքելցուն կիսելու ինչն էր մնացել Թուրք հարևանի հետ։

Զօրամասը գիշերելով Խանձաձոր գիւղում, հետևեալ օրը հասնում է Խծաբերդ—Խծաբերդցիները քահանաներով, խաչվառով դուրս են գալիս ընդունելու իրանց յոյս ու ապաւէն մարդկանց և գիւղը դառնալով շատ սիրուն հիւրասիրում են նրանց։ Մի գիշեր էլ այդտեղ մնալով, հետևեալ օրը, փետրվարի 18-ին զօրամասը շարժվում է դէպի Ալիեանլուն։ Ճանապարհին նայելով կողոպտած ու սրբապղծած Հարար գիւղի եկեղեցին և Ջրաղացը, որտեղ կատարվել է ոճիրը Մանասի խմբի վրա, այդ ձորում, Բաշարաթից մօտիկ, զօրամասը ենթարկվում է յանդուգն կրակի։ Զը նայելով զօրքի գինանշաններին՝ Թուրքերը չեն դադարում իրանց դիրքերից կրակ Թափել։ Զօրքը ստիպված է լինում պատասխանել և շուտով գրաւում է Բաշարաթը։ Շատ Թուրքերի տներ, աւերվում են Թնդանօթներով՝ մի քանի Թուրք սպանվում են, մի քանիսն էլ ձերբակալվում։ Ասում են, որ զօրքը ազատել է մինչև այժմ գերութեան մէջ մնացած հարարեցի չորս հայ ընտանիք։ Դէպքի մասին զեկուցել են Գօլօշչապօվին. Թէ ինչ է եղել դրանից յետոյ, չը գիտենք։ Առ այժմ մեզ հասած տեղեկութիւններ սրանք են։

Լ. Հայրապետեան

ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Ծիաթուրա. (փետրվարի 15-ից մինչև 22-ը)։ Ծիաթուրայում և Սաչխերում կան մի-մի հարիւրեակ Խապէօրի գնդի կօզակներ, որոնք հանգիստ չեն Թողնում մօտակայ գիւղերի բնակիչներին։ Բնակիչները կօզակներին ամեն րոպէ սպասելուց գիշերները քուն չունեն, և ցերեկները չեն կարողանում գործի գնալ։ Փետրվարի 16-ին մի սարի ստորոտում կօզակները նկատել են մի այծ, որի վրա 9—10 անգամ կրակել են և վայր ձգել. վերցրել են այծը, իսկ մի քանի ժամանակից յետոյ կաշին բազարում ման էին ածում ծախելու։ Այծի տէրը, ինչպէս յետոյ պարզվեց, մի աղքատ գիւղացի է եղել, որը շատ փնտրելուց յետոյ գտել է յանցաւորներին, բայց վախից ձայն չէ հանել։ Փետրվարի 18-ին կօզակները այցելեցին Խրէիթ գիւղը, որտեղից բերին 21 հրացան և ուրիշ բաներ։

Փետրվարի 20-ին տանում էին ձերբակալված Ադամ Ծուլբուրիձէին ոստիկանատունը բանտարկելու, բայց ոստիկանատան մօտ, ճանապարհին եղած սարի վրա, մի քանի ժամանակից յետոյ գտան հրացանի 2 հարուածով. սպանված ասում են, որ ճանապարհին գնալիս, Ծուլբուրիձէն յանկարծ փախել է կօզակների ձեռքից և նրանք էլ սպանել են։

Փետրվարի 20-ին կօզակները գնացել են Սարեկի գիւղը, ուր այրել են եղբ. Աբրահամիշվիլիներու տունը. ասում են, որ նաև անպատուել են նրանց 18 տարեկան օրիորդին։

Սարեկի գիւղը ևս ենթարկվել է կողոպուտի և աւերումի։ Փետրվարի 22-ին մի մարդու ցուցմունքի համեմատ, Թէ Ծիրքվալ գիւղում Թագնված են 2 ագիտատօրներ, կօզակները գնացել են ձերբակալելու նրանց. այնտեղ այրել են գուրիացի 2 ընտանիք, Թալանել են ամբողջ գիւղը, և բերել են ահագին քանակութեամբ խլած ապրանք. հընդկահաւեր, հաւեր, բադեր, մի կճոց ձուով լիքը և այլն։ Լուր է տարածվել, որ մի և նոյն գիւղում անպատուել են մի քանի օրիորդների։

Փետրվարի 21-ին պատերին կպցրին հետևեալ բովանդակութեամբ. «Փոխարքայի կարգադրութեան համաձայն, երբ նահանգը կը հանդարտվի, զինւորական դրութիւնը կը վերացվի և զօրքը իր նախկին տեղը կը տեղափոխվի»։

Անցեալ կիրակի վաճառականները կօզակների համար ճաշ սարքեցին, նաև խնդրեցին, որ կօզակները յայտնեն, Թէ կողոպուտ և աւերումն չեն լինելու, առևտուրը կը վերանորոգեն։ Նրանք էլ խոստացել են։ Վաճառականները կամաց-կամաց ապրանքներ են դարսում խանութներում, բայց, այնքան էլ յոյս չունեն Թէ նրանց ապրանքը չի ոչնչանայ։ (Ցնօրիս Փուրցէլի)

ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Փետրվարի 26-ի նիստը

Փետրվարի 26-ին, կիրակի, ցերեկվայ ժամը 2-ին կայացաւ համագումարի V նիստը։

Այդ նիստը պէտք է զբաղվէր մուսուլմանների ծրագրի 5-րդ և հայերի ծրագրի 8-րդ կէտով—քոչի հարցով։

Քոչի հարցը ամենահրատապ և կարևոր հարցն էր ներկայ խորհրդակցութեան համար, ուստի և մեծ անհամբերութեամբ սպասվում էր։

Յայտնի է, որ գաւառներում երկու ժողովուրդն էլ անձկութեամբ սպասում է այդ հարցի լուծման և ինքը Փոխարքան առանձնապէս շեշտել էր այդ հարցի կարևորութիւնը իր ճառի մէջ։

Նախագահը բանալով նիստը յայտնեց, որ ժողովի քննութեան առարկան է քոչի հարցը, որ Թէ մուսուլմանների, Թէ հայերի ծրագրի մէջ դրված է։

Քալանթար, քոչի հարցի մասին մի երկար և փաստօրէն լուսաբանված ճառ է արտասանում, որի ամփոփումը առաջ ենք բերում այստեղ։

Ա. Քալանթարի զեկուցումը

Մեր առաջ դրված հարցը մեր երկրի ամենախոշոր և ցաւոտ հարցերից մէկն է, ոչ միայն այսօր, երբ մենք զբաղված ենք հայ-Թուրքական կռիւները լուծելու հոգսով, այլ և առհասարակ։

Դա մի հարց է, որ հայերի կողմից միշտ յարուցվել է, դա մի հարց է, որ շատ և շատ անգամ զբաղեցրել է վարչական հիմնարկութիւններին, բայց որը երբեք չէ ենթարկվել սիստեմական քննութեան և ուսումնասիրութեան և աւելի էլ սակաւ արժանացել է սիստեմական գործողութիւնների վարչական հաստատութիւնների կողմից։

Ես անհրաժեշտ եմ համարում այսօր կանգ առնելու այդ հարցի կարևորութեան վրա և համոզելու, որ չէ կարելի զանցառութեան տալ և բարձիթողի անել մի հարց, որը չափազանց մեծ նշանակութիւն ունի մեր երկրի տնտեսութեան համար։

Քոչի հարցը վերաբերում է ոչ միայն քոչուորին, այլ այն նստակեաց ազգաբնակութեան, որի գիւղերի մօտով նա անցնում է։ Այդ անցնողը մի այնպիսի անցնող չէ, ինչպէս են ճանապարհորդները մեծ ճանապարհով, որոնք գործ ունեն միայն ճանապարհի հետ։ Դրանք վաճառականներ և արդիւնագործներ չեն, որոնք գալիս են միմեանց հետ հաղորդակցութիւն ունենալու և ապրանքների փոխանակութիւն կատարելու։ Եթէ այդպէս լինէր դրութիւնը, այդպիսի սերտ շփման միայն կարելի է ուրախանալ։

Մեր առաջ կատարվող շարժումը այդ տեսակի չէ։ Սա Թափառող ժողովրդի տեղափոխութիւն է իր անասուններով և տնային տնտեսութեան պարագաներով։

Անասուններին հարկաւոր է ճանապարհին կերակուր, որը նրանք վերցնում են ճանապարհի վրա գտնվող տեղերից, ուստի և փչացնում են մերձակայ նստակեաց գիւղերի խոտհարքը, ցանքերը և արօտները։ Իսկ դրանց վրա աւելանում են և գողութիւնը ու ընդհարումները, որոնք ամեն տարի խլում են ժողովրդից զոհեր։

Քոչի հետ կապված չափազանց ծանր հանգամանքները միշտ դժգոհութեան պատճառ են եղել տեղական ազգաբնակութեան մէջ։ Նա մեր երկրի ցաւոտ տեղերից մէկն է, որի մասին տասնեակ տարիներ գանգատներ են հասնում վարչական շրջաններին։

Եւ հասկանալի է, որ եթէ սովորական տարիներում մարդկանց այդ չափազանց անախորժ շփումը առաջացնում է դժբաղդութիւններ, այժմ, երբ հայերի և Թուրքերի յարաբերութիւնները սուր կերպով լարված են, աւելի ևս պատասխանատու և ծանր հանգամանք է ստեղծվել մեր առաջ։

Նստակեաց երկրագործի համար քոչուորը մի պատուհաս է, մի չարիք է, որ նա պարբերաբար տանում է ամեն տարի։ Դա մի աղէտ է, մի ծանրութիւն է, մի հարկ է, որից ճնշվել է և ճնշվում է մեր ժողովուրդը։

Պէտք է այստեղ յայտնեմ, որ քոչուորական գործի մէջ պէտք է տարբերել մի քանի տեսակները։ Նրանցից մի քանիսը ոչ միայն անվնաս են շրջակաների համար, այլ և ինքն ըստ ինքեան ցանկալի գործօններ են մեր իրականութեան մէջ։ Օրինակ, մեր լեռնային շրջաններում, ինչպէս են Զանգեզուրի, Դարալագեազի, Նոր-Բայազէտի, Ալէքսանդրօպօլի, Ախալքալաքի և ուրիշ գաւառների լեռնադաշտերում, տեղական գիւղացիները, Թէ հայ և Թէ Թուրք, ամեն տարի ուղարկում են իրանց անասունները մերձակայ լեռնային արօտները, այնտեղ արածացնում նրանց և ապա մի քանի ամսից յետոյ վերադարձնում գիւղ։ Նրանք ոչ ոքի առանձին վնաս չեն հասցնում, մեծ ճանապարհներ չեն անցնում և մի քանի ժամվայ մէջ գնում են ու գալիս։

Այդ տեսակ են և Եւրօպայում գտնվող լեռնաստանների տնտեսութիւնները, օրինակ, Շվէյցարիայում, Զալցբուրգում, Տիրօլում։

Կան և այնպիսիները, որոնք փոքր ինչ աւելի հեռու են լեռնային արօտներից և պէտք է մի 10—20 վերստ ճանապարհ անցնեն։ Դրանք Թէև արդէն անյարմարութիւններ են պատճառում, բայց դրանց էլ կարելի է հաշտվել։

Սակայն ինչ կարելի է ասել այն քոչուորների մասին, որոնք անցնում են ոչ Թէ 20—30, ոչ Թէ 50—60, այլ և 100—150 և նոյն իսկ 200 վերստեր։ Այդպէս են, օրինակ, Մուղանի, Միլի անապատներից բարձրացող քոչուորները, որոնցից մի քանիսը վրաններ են զարկում, ո՞ւր էք կարծում, Սևանայ լճի մօտ գտնվող լեռնարօտներում։

Ահա այդպիսի քոչուորները բոլորովին արդէն պատահաններ են դառնում այն գիւղերի համար, որոնց մօտով նրանք պէտք է անցնեն։ Եւ եթէ քոչուորների դէմ գանգատ և բողոք կայ, ահա այդ քոչուորներից է։

Այն օրից, որ ռուսաց իշխանութիւնը հաստատվել է մեր երկրում, յարուցվել է և քոչուորների խնդիրը, սակայն իշխանութիւնը երբեք չէ նայել խնդրի վրա լայն կուլտուրական տեսակէտով և բաւականացել է նեղ, զուտ ադմինիստրատիւական մի քանի կարգադրութիւններով։

Վարչութիւնը տեսնելով քոչերի հասցրած վնասները, երբեմն այլէս փորձ է արել արգելելու քոչերը, բայց որովհետև նա չէ նայել գործի վրա աւելի հիմնական կերպով, չէ կանգ առել այն պայմանների վրա, որոնք դրդում են մարդկանց քոչելու և ինքը չէ նպաստել ստեղծելու պայմաններ, որպէս զի քոչուորները կարողանան նստակեաց դառնալ, ուստի նրա արձակած հրամանները մնացել են անկատար և չարիքը մնացել է չարիք, մինչև նոր արգելք և նոր Թոյլտուութիւն քոչելու համար։

Դեռ 1850 Թւականների սկզբներին Երևանեան նահանգապետը մի հրաման էր արձակել, որ քոչուորները չը բարձրանան Նոր-Բայազէտի և Ալէքսանդրօպօլի գաւառները. Թէև նրա կարգադրութիւնը կատար չածվեց, միայն մի հետևանք ունեցաւ. որոշվեց քոչուորների արօտների սահմանագիծը։

Գանձակի նահանգապետը Թէ 1874 և Թէ 1879 Թւականներին ներկայացնել զեկուցումներ քոչուորների մասին և յայտնել այն կարծիքը, որ պէտք է ոչնչացնել քոչերը, բայց այդ զեկուցումները մնացին առեանների սեղանների վրա։

Եղել են և ուրիշ կարգադրութիւններ։

Բայց, անկասկած, քոչերը ոչնչացնելու համար վարչութիւնը պէտք է հաւատացած լինէր, որ քոչուորը կարող է մնալ տափարակում և կարող է ապահովել իր ապրուստը երկրագործական աշխատանքով։ Եւ եթէ չը կային նպաստաւոր պայմաններ, նա պէտք է հարց յարուցանէր այդ պայմանները ստեղծելու համար։ Նա այդ չէ արել։ Ճիշտ է նա երբեմնապէս իր զեկուցումների մէջ յայտնել է, որ մի քանի տեղերում ոռոգելու ջուր չը կայ և առուներ չեն անցկացրված, բայց դրանք միայն հարևանցի ցուցումներ էին, որոնք անցել են և առանց հետևանքների։

Ճիշտ է ինքը, ազգաբնակութիւնը փորձեր արել է նստակեաց դառնալու և մենք գիտենք գիւղերի մի ամբողջ ցուցակ, որոնք առաջ քոչում էին դէպի սարեր, իսկ այժմ դարձել են նստակեացներ, գիտենք և շատ գիւղեր, որտեղ այժմ խոշոր անասնապահներ և արօտ գնացողներ մնացել են միայն բացառիկ անձնաւորութիւններ, բայց այդ բոլորը կատարվել է չափազանց դանդաղ կերպով և յամենայն դէպս խրախոյսի ու աջակցութեան չէ հանդիպել պետական հաստատութիւնների կողմից։ Իսկ մեր երկրի քիւրդերը սկսել են նստակեցութեան փորձեր անելու մասամբ իրանց այն ցեղակիցների օրինակին հետևելով, որոնք ապրում են Թիւրքիայում։ Հին գործերից երևում է, որ յիսնական Թւականների սկզբներին Թիւրքաց կառավարութիւնը ձեռնարկած է եղել նստակեաց դարձնելու քիւրդերին և Թէև կատարելապէս չէ հասել իր նպատակին, բայց և այնպէս մի որոշ աստիճան զարկ է տուել այդ գործին։

Անկասկած, այնտեղ ուր նախկին Թափառականը սկսել է երկրագործութեամբ պարապվել, զարգացրել է այգեգործութիւն, պարտիզպանութիւն, բամբակագործութիւն, նա սկսել է ընտելանալ նստակեաց կեանքի և գիտակցել, որ նստակեաց կեանքը աւելի արդիւնաւէտ է և հիմք է անընդհատ բարգաւաճման։

Բայց իրականութիւնն այն է, որ ամեն տեղ դեռ չեն ստեղծված այդ պայմանները և քոչը դեռ պահպանել է իր գոյութիւնը։ Ճիշտ է, մի շարք փաստերով կարելի է ապացուցել որ քոչուորների ամբողջ խմբեր գնում են սարերը միայն աւանդաբար, միայն սովորութեան ազդեցութեան տակ, բայց և այնպէս դեռ շատ և շատ են այնպիսիները, որոնք քոչում են և պէտք է քոչեն, մինչև որ կը պատրաստվին նրանց համար ապրելու նոր պայմաններ։

Քոչը յանկարծակի կանգնեցնել անկարելի է. ոչ ոք չէ կարող այդ առաջարկել։ Բայց բարւոքել նրան կարելի է և հնար եղածին չափ դարձնել սակաւ վնասաբեր։ Այն միջոցներից, որ կարելի է առաջարկել, մենք կը յիշատակենք մի քանիսը.

Նախ և առաջ կարելի է և պէտք է կրճատել քոչի ճանապարհների Թիւը։

Քոչուոր մարդը պատրաստ է ամեն մի ճանապարհով գնալ առաջ և որքան շատ է ճանապարհների Թիւը, այնքան լաւ է նրա համար, որովհետև նրա անասունները աւելի շատ խոտ կը գտնեն Թարմ տեղերում։ Երբ որ ճանապարհների Թիւը պակասացվի, այն ժամանակը և կը պակասի այն զրկանքների ու զոհերի Թիւը, որ տալիս է նստակեաց գիւղացիութիւնը քոչուորներին։

Երկրորդ՝ մի որոշ աստիճան կօգնէր գործին, եթէ լեռները ուղարկվէին միայն անասունները։ Աւելորդ մարդիկ, որոնք կենդանիների համար անհրաժեշտ չեն, շատ անգամ ոսկերով, գողութիւններով և աւարներով են լինում զբաղված, որոնցից ամեն սարի մեծ վնաս ունեն գիւղացիները։

Երրորդ՝ նպատակայարմար կը լինէր, որ քոչը առաջ ընթանար աւելի կարճ ժամանակամիջոցում և դուրս գար միւսների հետ, եթէ ոչ միաժամանակ, գոնէ շատ մօտ օրերում։

Քոչի աւելի արագ առաջ ընթանալը այն նշանակութիւնն ունի, որ նրանք աւելի քիչ ստիպված կը լինեն ուտեցնել գիւղերի արտերը և խոտերը։

Չորրորդ՝ կարևոր է, որ ճանապարհների որոշ կէտերում լինեն պահակներ, որոնց կազմութիւնը կարելի էր յետոյ մշակել։

Հինգերորդ՝ բարուքել անասնաբուժական հսկողութիւնը, կապելով նրան քոչի և արօտների հսկողութեան գործի հետ։

Վեցերորդ՝ մշակել գիւղական պահապանների խմբերի կազմակերպութեան ծրագիր՝ գիւղերը պահպանելու յարձակումներից և փասաններից. նոյնպէս խառն պահակախմբեր և արօտների սահմանները ապահովելու նպատակով։

Եօթներորդ՝ արօտների հսկողութեան համար մասնակցութեան կանչել անասնապահների ընտրեալներին։

Անշուշտ այս կէտերին կարելի է աւելացնել և ուրիշները։

Սակայն մեր առաջ մի չափազանց դժուար և ծանր հարց է դրված, այն է, թէ ինչ անենք այս տարի։ Մեր առաջ բերած միջոցները կարող են օգնել քոչւորական գործի բարուքման, բայց ներկայ տարին բացառիկ տարի է։ Եւ հարց է ծագում, թէ արդեօք քոչը կարող է այս տարի բարձրանալ թէ ոչ։

Այդ հարցի պատասխանը կախված է վստահութեան այն չափից, որ մենք ունենք դէպի հայ և Թուրք մասսաների տրամադրութիւնները և դէպի հաշտութեան ամրութիւնը։

Մենք, ինտելիգենտ հայ և Թուրք անհատներս, անկասկած, շատ ճիշտ կը վճռէինք հարցը մեր մէջ եթէ դա մեզ վերաբերում լինէր և դրական հետևանքների կը գայինք այս կամ այն կէտի վերաբերութեամբ։ Բայց այժմ գործը անցել է մասսաներին։ Նրանց տրամադրութիւնից է կախված ամեն բան։ Մենք ինտելիգենտներս չօրօրենք մեզ փոխադարձ հաւաստիացումներով, այլ այնպէս դնենք գործը, որ իրապէս հասած լինենք մխիթարական հետևանքների։ Այս տարւայ քոչի դէմ ոչ մէկը մեզանից չէր խօսի, եթէ փոխադարձ վստահութեան զգացումները խոր արմատներ գցած լինէին մեր մասսաների մէջ։

Ո՞վ կարող է երաշխաւորել, որ ամառը կանցնի առանց ընդհարումների, որ հայկական և Թուրքական մասսաները, շփվելով միմեանց հետ, չեն ունենայ սուր ընդհարումներ և յետոյ առաջ չեն բերի սարսափելի հրդեհ երկրում։

Հայերը երաշխաւորել այդ են կարող։ Գաւառներից ստացած գիւղական խնդիրները և մեր պատգամաւորների յայտարարութիւնները յանգում են այն կէտին, որ եթէ կարելի է, ներկայ տարում յատկապէս այն շրջաններում, ուր ընդհարումներ են տեղի ունեցել, վերացվի քոչը։ Անկասկած՝ քոչի լինել չը լինելը կախված է քոչի անհրաժեշտութեան էութիւնից, բայց հայերը չեն կարող իրանք իրանց կողմից համարձակ կերպով ասել, թէ քոչեցէք, ամեն բան հանգիստ ու հանդարտ կերթայ։

Հայերը այդ տեսակ պատասխանատւութիւն չեն կարող վերցնել իրանց վրա։ Դա ծանր պատասխանատւութիւն է։

Աղայեվ։ Քալանթարի ճառը հակասում է սօցիօլօգիական և ազգերի պատմական էվօլիւցիային։ Թուրք ազգերի շարժման պատմութիւնից երևում է, որ նրանք ընթանում էին գետերի երկարութեամբ, իսկ շնորհիւ այդ հանգամանքի այժմ տափարակ տեղերը բռնել են մուսուլմանները, իսկ սարահարթերը—ուրիշ ազգերը։ Ազգերը ապրում են պատմական զարգացման մի քանի շրջաններ. 1) որսորդութեան և ձկնորսութեան շրջանը, 2) Թափառական, քոչային կենցաղ և 3) կեանքի նստակեաց շրջան։ Մուսուլմանները այժմ ապրում են Թափառական, քոչի կեանքով, Թէև տեղ-տեղ նկատվում է անցումն դէպի նստակեաց կեանքը։ Վերացնել քոչը վարչական միջոցներով՝ անկարելի է։ Մարդկանց տափարակներից դէպի սարերն է քշում մի կենսական պահանջ—ամառը տափարակի վրա ամեն բան մեռնում է, չորանում է, չը կայ ջուր, չը կայ բուսականութիւն, չը կայ կեանք, ուստի ամեն ինչ որ կենդանի է, ձգտում է դէպի սարերը։ Բացի դրանից նրանց քշում է և մալարիան։ Ասել տափարակների բնակիչներին «մի քոչեցէք, մնացէք այստեղ», կը նշանակէ գիտմամբ դատապարտել նրանց մահվան։ Եթէ այդպէս ասէք, ժողովուրդը այդպէս էլ կը հասկանայ, թէ իրան կամենում են դատապարտել մահվան, իսկ եթէ այդ ասէք, էլ ոչ մի հաշտութիւն չէ կարող լինել, էլ խաղաղութիւն չէ կարող հաստատվել։ Չը պէտք է անջատել մարդկանց, այլ միացնել, բայց որպէս զի ընդհարումներ չը լինեն, թող դրա համար իշխանութիւնները միջոցներ ձեռք առնեն։ Մեր անդառնալի վճիռն է, որ քոչը պէտք է լինի, միայն մենք խնդրում ենք միջոցներ ձեռք առնել, որ ընդհարումներ տեղի չունենան։

Յետագայ ճառախօսները միայն արտայայտիչ էին այն երկու հակադիր կարծիքների, որ յայտնեցին Քալանթարը և Աղայեվը և այդ հակադիր կարծիքների պայքարի վրա կենտրօնացան իրանց ճառերը։

Հայ պատգամաւորները կամենալով բոլորովին անկեղծութեամբ խօսել, չը կամենալով, որ Թուրք ժողովուրդը որ և է վնաս կրէ, հաստատելով հանդերձ, որ քոչը անհրաժեշտ է, պահանջ է Թուրքերի համար, չէին վստահանում սակայն որ և է պատասխանատւութիւն վերցնել իրանց վրա և հաստատել անպատճառ, թէ ընդհարումներ չեն լինի և հէնց այդ նկատումներով հայ պատգամաւորները խնդրում էին, որ, եթէ հնարաւորութիւն կայ, յետաձգել այս տարի քոչ գնալը կամ գոնէ սահմանափակել, այլապէս նրանք չեն կարող երաշխաւոր լինել, թէ ընդհարումներ չեն ծագի։

Թուրք պատգամաւորները, ընդհակառակը, պնդում էին, որ թէ տնտեսական, թէ այլ պատճառներով անհնարին է կանգնեցնել քոչը և առաջարկում էին այժմ իսկ գործնական միջոցներ մշակել հնարաւոր ընդհարումների առաջն առնելու համար։

Պրոֆեսոր Կարաբէգով, գտնում է, որ հայ կոմիտէտները պէտք է գործ դնեն իրանց ազդեցութիւնը իրանց ժողովրդի վրա և իրանք տանեն Թուրքերին մինչև քոչերի տեղը։

Վէքիլով, նկատում է, որ քոչում են ոչ միայն Թուրքերը, այլ և հայերը, յոյները և ուրիշներ։

Լ. Սարգսեան մի երկար ճառի մէջ այն միտքն է յայտնում, որ երկրի կուլտուրայի համար, մուսուլման պատգամաւորները չը պէտք է պաշտպան հանդիսանան քոչին, այլ նպաստեն այն բանին, որ Թուրք ժողովուրդը անցնէ կուլտուրայի բարձր ձևերին, իսկ այդ հնարաւոր է, երբ քոչը վերացվի։ Այժմ քոչը բացատրվում է միայն ատաւիստիքական պատճառներով, սովորութիւնով։ Երբ քոչը վերանայ, անապահովութիւնը կը կենտրօնանայ ալպիական շերտերի վրա. տափարակների բնակիչները կը ծախեն իրանց հօտերը ալպիական շերտերի բնակիչներին, իսկ իրանք ձեռք կը բերեն երկրագործութեան համար կարևոր կենդանի ինվենտար։ Քոչի պատճառով, մուսուլմանների մէջ ոչ անասնապահութիւնն է զարգացած, ոչ երկրագործութիւնը։ Այստեղ խօսում են, որ քոչը բղխում է կլիմայական պատճառներից, բայց չէ՞ որ տափարակի վրա ապրում են գերմանացիներ, հայեր, ռուսներ և նրանք չեն քոչում։ Առաջարկում են կօզակների պահակախմբեր, բայց աւելի նպատակայարմար չէ՞ր լինի այդ ծախքով բարուքել տափարակների ժողովրդի սանիտարական կեանքը, ջրանցքներ անցկացնել և այլն։ Թուրք պատգամաւորները առաջարկում են, որ հայ դաշնակ կոմիտէտները օգնեն այս գործում. բայց չէ՞ որ դա հակասութիւն է. դուք մի կողմից առաջարկում էք նրանց ոչնչացնել, իսկ այժմ խնդրում էք, որ նրանք աջակցեն։

Ճառախօսը ցոյց է տալիս, որ մինչև XI-դ դարը երբ Թուրք ցեղերը սկսեցին Անդրկասպեան երկրից գաղթել մեր երկիրը, սա շատ բարձր կուլտուրա ունէր և հէնց Թուրք ցեղերի այդ քոչը ոչնչացրեց, ջնջեց այդ կուլտուրան։

Նախմալիեվ, գտնում է, որ եթէ քոչը թոյլ չը տրվի, դրանից մեծ բարդութիւններ կառաջանան։ Պէտք է ի նկատի ունենալ, որ ոչ միայն ամառային, այլ և ձմեռային քոչատեղերական, օր. Մուղանի, Շիրակի դաշտերը։

Ն. Ղուլեան արտասանում է մի երկար ճառ, որի մէջ քննարկելով Թուրք և հայ մասսաների տրամադրութիւնը, որ այս րոպէին թշնամական է և ցոյց տալով, որ եթէ Թուրքերը այն կարծիքն ունեն, թէ հայերը կամենում են ջնջել մուսուլմաններին, հայերն էլ այն կարծիքի են, թէ Թուրքերը կամենում են ապրել իրանց դաւանակից պետութեան Թիւրքիայի տիրապետութեան տակ և դրա համար հարկաւոր են համարում ջնջել հայերին—գտնում է, որ պէտք է թողնել որ այդ կրքերը հանդարտվեն, պէտք է թոյլ չը տալ, որ վրէժխնդրութեան զգացումը աւելի զարգանայ։ Ուստի պէտք է աշխատել հեռացնել հայերին և Թուրքերին միմեանցից և թոյլ չը տալ քոչը։ Մենք պէտք է վտանգին դէմ ու դէմ նայենք և չը թաքցնենք, իսկ վտանգ կայ, այն էլ շատ մեծ։ Ընդունում եմ, որ յանկարծ չէ կարելի փոխել կեանքի կազմը։ Թող այդ հարցը որոշեն իշխանութիւնները և տեղական մարդիկ, մենք ամենևին չենք կամենում, որ մուսուլմանները վնաս կրեն։ Մի քանի վիճակագրական տեղեկութիւններ, որ բերում է, ցոյց են տալիս, որ քոչում են ոչ միայն խաշնարածները, այլ և նրանք, որոնք ոչ մի խաշն չունեն։

Կ. Խատիսեան։ Քոչը հարկաւոր է. իրանք մուսուլմանները կը թողնէին քոչերը, եթէ այդ հնարաւոր լինէր։ Բայց ինչ միջոցներ կան, որոնցով կարելի լինէր այս տարի անվտանգ դարձնել քոչը—ահա այդ հարցին մենք հայերս պատասխանել չենք կարող։ Թող իշխանութիւնը այս և այն միջոցը ձեռք առնէ։

Զիատխանով։ Եթէ կառավարութիւնը 50 տարւայ ընթացքում չը կարողացաւ ոչնչացնել քոչը, ուրեմն մենք ամենևին չենք կարող։ Եթէ մենք վճռենք վերացնել քոչը, դա նոր բռնկումներ առաջ կը բերէ։ Իշխանութիւնները կարող են այնպէս անել, որ ընդհարումներ չը լինեն։ Մենք արդէն որոշեցինք համախմբել ազգաբնակութիւնը. այդ միջոցը երբ իրագործվի, հնարաւոր կը լինի անցնել նստակեաց կեանքի եղանակին, բայց այժմ քոչի վերացման մասին խօսք անգամ լինել չէ կարող։

Յ. Մելիք-Բեգլարեան նկատում է, որ այդպիսի կարևոր հարցի լուծման համար մուսուլմանները եկել են առանց հարկաւոր նիւթերի, պէտք է նրանք մանրամասն մշակէին այդ հարցը և ապա կարելի կը լինէր լուծել։

Տէր-Աւետիքեան ծանօթացնում է այդ հարցի դրութեան հետ Երևանի նահանգում, գլխաւորապէս իւրտերի հարցի հետ. առաջարկում է, որ այդ իւրտերը տրվեն բացառապէս խաշնարածներին և ոչ նրանց, որոնք խաշն չունեն։

Խասմամեդով յայտնում է, որ քոչի հարցը արդէն քննվել է Գանձակի նահանգական ատեանում տեղացիների մասնակցութեամբ և որոշվել է, որ նա անպատճառ կայանայ։ Այժմ պէտք է իշխանութիւնները միջոցներ ձեռք առնեն՝ ընդհարումների առաջն առնելու. պէտք է կոմիսիաներ հաստատել տեղում ծագած տարաձայնութիւնները վճռելու համար։

Մ. Լազարեան, գտնում է, որ քոչը սկըսվում է ապրիլին և վերջանում օգոստոսին։ Մի քանի անգամ Թուրքերը բարձրանում են և իջնում. ինչպէս կարելի է տասնեակ վերստերի տարածութեան վրա պահակներ դնել։ Աւելի լաւ է մի կերպ այս տարի թողնել։

Թօփչիբաշեւ։ Տեսականապէս քոչը անկանոն երևոյթ է, բայց քանի որ նա գոյութիւն ունի և վաղուց, չէ կարելի մի րոպէում ջնջել նրան։ Նա շռայլութիւն չէ, այլ կեանքի պահանջ։ Այդպէս փորձեր անելը վտանգաւոր է։ Մենք արդէն առաջարկել ենք այն միջոցների ծրագիրը, որոնցով կարելի է կանոնաւորել քոչի հարցը։

Բժ. Ստեփանեան։ Մենք միայն հաստատում ենք վտանգը, որ ի նկատի պէտք է ունենալ. մենք ցանկանում ենք լինել անկեղծ և ասում ենք, որ վտանգ կայ. մենք չենք կամենում օգտվել մուսուլմանների նեղ կացութեամբ. դա մեզ համար նուաստացուցիչ կը լինէր։ Մենք չենք փակում քոչի ճանապարհները, բայց մատնացոյց ենք անում, որ դրութիւնը շատ խռովալից է և պէտք է լինել զգոյշ։

Ս. Քալանթար. Թուրք պատգամաւորներից մէկը յայտնեց, որ ինչ հարկաւորութիւն կայ խօսել քոչերի հարցի մասին ընդհանրապէս և որ պէտք է կանգ առնել միայն այն կէտերի վրա, որոնք վերաբերում են այս տարւայ քոչին։ Ես կը յիշեցնեմ այդ առարկութեան առիթով, որ մենք անցեալ նիստում զբաղված էինք հանրային կրթութեան, իրաւունքների հաւասարացման խնդիրներով, որոնք յարուցվում էին Թուրք պատգամաւորների կողմից։ Եթէ մենք այն հարցերով զբաղվեցինք, ես կարծում եմ, որ աւելի ևս մեծ իրաւունքով պէտք է մենք զբաղվենք իմ դրած հարցով, որ անմիջական կապ ունի քոչերի հարցի հետ։ Բայց ես կասեմ աւելին։ Մենք պարտաւոր ենք այդ հարցով շատ լուրջ զբաղվելու։ Եթէ ենթադրենք, որ վարչութեան և մեր բոլորի միահամուռ աջակցութեամբ մենք կարող եղանք այս տարի նոյն իսկ անփորձ և անվնաս քոչը տանել սարերը և վայր իջեցնել, այս դեռ չէ նշանակում թէ հետևեալ տարիները մենք չը պէտք է լուրջ կերպով զբաղվենք նոյն հարցով։ Ո՞վ է երաշխաւոր, որ եկող տարի նոյնպէս մենք զբաղված չենք լինելու նոյն հարցով։ Եթէ մինչև այժմ հայերը և Թուրքերը ունէին շատ անյարմարութիւններ, մի կերպ կառավարվում էին քոչի ժամանակ, այժմ երբ յարաբերութիւնները մի անգամ փչացան, կարող են հին դժգոհութիւնները սուր արտայայտութիւններ ստանալ։ Դժգոհութիւններ վաղուց կային, բայց նրանք թմրեցվում էին մի կերպ։ Մեր պատգամաւորներից մէկը ասաց, որ եթէ հայ-Թուրքական ընդհարումները չը լինէին, այժմ հարց էլ չէր լինի քոչի մասին։ Այդ ճիշտ է գուցէ, բայց դա նշանակութիւն չունի։ Եթէ ռուս-ճապօնական ընդհարումը տեղի չունենար, գուցէ Ռուսաստանի ներքին կազմի հարցերն էլ այնպէս յանկարծակի հանդէս չը գային։ Դէպքը դրել է մեր առաջ մի խոշոր և սուր հարց և մենք պէտք է նրանով զբաղվենք։ Գոնէ այժմ մենք նրան հերթական դարձնենք։ Այն, ինչի մասին ամբողջ 50—60 տարի խօսվում է, հանենք նեղ վարչական շրջանակից և կանգնենք պետական տեսակէտի վրա։ Քոչւորների նստակեաց դառնալու հարցը կարևոր է մանաւանդ Թուրքերի համար։ Ես իբրև կովկասեցի յայտնում եմ, որ քոչւոր Թուրքերի նստակեաց դառնալը մի մեծ բարիք և բաղդ կը լինի Թուրքերի համար։ Գիւղերը կը հարստանան, կը բարգաւաճեն, ինչպէս բարգաւաճ է օրինակ մի որ և է Բուրգամիր, որ միլլիօնների արդիւնագործութիւն ունի, իսկ հարևան քոչւորները թշուառութիւնից միայն փոքր ինչ բարձր են։ Եթէ մենք որոշ նախագծութիւններ և վերապահումներ ենք անում քոչւորների այս տարւայ քոչի մասին, այստեղ խօսում է մեր մէջ անկեղծութիւնը և բարեխղճութիւնը։ Հայերի համար թշնամական տեսակէտով նպաստաւոր են քոչերը, որովհետև քոչւորները քոչի ժամանակ չափազանց վտանգաւոր վիճակի մէջ են։ Եւ արդարև, անցեալ տարի շատ տեղերում քոչւորները ամեն ջանք գործ էին դնում, որ չը յարուցանեն ընդհարումներ։ Դիլիջանում ինձ պատմեցին անցեալ տարի, որ քոչը անցել է անօրինակ խաղաղ, Թուրքերը դարձել էին լաւ, խոնարհ և հեզ—և աշխատում էին ոչ ոքի ոչ մի նեղութիւն չը տալ։ Եւ հասկանալի է թէ ինչու։ Նրանց ապրանքը և նրանց ընտանիքների մի մասը սարերումն էին, միթէ կարելի էր նրանց վտանգի ենթարկել։ Այդ տեսակէտով հայերը ոչ մի երկիւղ չունենն Թուրքերից, բայց ո՞վ կարող է երաշխաւորել, որ մի տեղ մի կայծ չի կրակվի, որը և կը բռնկվի ու կը դառնայ մի հրդեհ։ Ի՞նչ սրտով կարող է հայ կամ Թուրք գիւղականը, տեսնելով իր հակառակորդին, իր ազգականներ սպանողին, կամ այն մարդուն որ նստած իր ձիու վրա, կամ լծած վրա եզները դաշտ է դուրս եկել։ Միթէ այս տեսակ դէպքերը, որ յաճախ են պատահելու. կարող են հանգիստ տրամադրութիւն ներշնչել։ Միթէ քանի որ չէ պատժվել կողոպտող, աւերողը՝ գիւղացին կարող է հանգիստ նայել իրան վնասներ հասցնողների վրա։ Մենք 6—7 ժողովներում խօսել ենք քոչի մասին. մըտել ենք Թուրքերի դրութեան մէջ, ծրագրել ենք զանազան, նոյն իսկ ցնորական միջոցներ, բայց գոհ չենք մնացել մեր ծրագիրներից։ Օրինակ մենք մտածում էինք, որ գուցէ Թուրք սէիդների և քիւրդերի միջոցով կարողանային շէյխերը ուղարկել իրանց անասունները կամ յանձնէին սարերի մօտ ապրող հայերին, բայց այդ բոլորը հեշտ ասվում է, բայց հեշտ չէ իրագործվում։ Մենք միջոցներ չը գտանք, որովհետև գլխաւոր պայմանը դեռ գոյութիւն չունի, այն է վստահութիւն մասսաների մէջ։ Մեծ դեր կարող էր խաղալ վարչութիւնը, բայց նա մինչև այժմ այնպիսի միջոցներ գործ չէ դրել, որ վստահութիւնը լիակատար կերպով վերականգնէր. գիւղերի ռմբակոծութիւնը ոչ մի բարերար տպաւորութիւն չէ թողնում, որովհետև ռմբակոծութեան ենթարկվածը ամենևին վստահ չէ, որ վաղը նրա վրա յարձակումներ չեն լինի և նա նորից ստիպված չի լինի հոգալ ինքնապաշտպանութեան մասին։ Մենք ուզում ենք, տենչում ենք խաղաղ կեանքի, մենք կռւի մէջ չենք մեծացել և մեր ոյժը խաղաղ կուլտուրական գործունէութեան մէջ է։ Մեր հայերի մասին ասում են թէ մենք ուժեղ տարր ենք։ Դա չափազանցված կարծիք է։ Մենք ինքներս մեր մասին աւելի համեստ կարծիք ունենք և համարում ենք մեզ դեռ շատ յետամնաց։ Բայց եթէ այժմեան արածն էլ համարվում է աչքի ընկնող, պէտք է յայտնեմ, որ մենք նրան ձեռք ենք բերել խաղաղ կուլտուրական մըթնոլորտում։ Մեզ խաղաղութիւն է հարկաւոր, որպէս զի մենք զարգանանք և ուժեղ կուլտուրական գործունէութիւն ունենանք։ Ուստի երբէք մենք չենք ցանկանայ, որ մեր երկրում մի օր աւելի շարունակվի խառնակ դրութիւնը և անհանգիստ կեանք։ Եւ այժմ մենք ուզում ենք հաւատ և վստահութիւն ստանալ, որ կռիւների շրջանը անցել է և մենք վերադարձել ենք մեր խաղաղ աշխատանքին։ Տուէք մեզ այդ վստահութիւնը։ Եթէ մեր յոռետես յայտարարութիւնները վշտացնում են, թող զգան, որ մեծ և ծանր է այն կնճռոտ հարցը, որ դրված է մեր առաջ և որ անհրաժեշտ է ամեն միջոց գործ դնել մոռացնել տալու այն ոճիրը, որ գործված է մեր երկրում։

Նահանգապետ Բառուշ, ցոյց տալով, որ Քալանթարը տուեց քոչի հարցի մի փայլուն պատմական պատկեր, այն միտքը յայտնեց, թէ լսելով արտայայտված կարծիքները, կարելի է հակասութիւն տեսնել երկու կողմերի մէջ, բայց այդ հակասութիւնը միայն առերևոյթ է։ Հայերը պաշտպան են այն կարծիքի, թէ հարցը պէտք է վճռել օրգանական, արմատական կերպով, իսկ մուսուլմանները, չը հերքելով պրինցիպով այն հարցը, որ ցանկալի է քոչը ջնջել և անցնել աւելի բարձր կուլտուրայի, գտնում են միայն, որ այժմ այդ իրագործելը անհնարին է։ Դա պատմական էվօլիւցիայի խնդիր է. իսկ եթէ մենք այժմ լուծենք, դա կը լինի ոչ թէ էվօլիւցիա, այլ ռէվօլիւցիա։ Իմ խոր համոզմունքով, ամեն մի ռէվօլիւցիա կանգնեցնում է կեանքի ընթացքը և վնասում նրան։ Կարելի է երկու հարցերն էլ միաժամանակ մշակել։ Ես կառաջարկէի ընտրել երկու մասնաժողովներ. մէկը կը զբաղվի ընդհանուր հարցի մշակմամբ, միւսը այն հարցով, թէ ինչ գործնական միջոցներ մշակել ընդհարումների առաջն առնելու համար։

Ֆրանսիական առած կայ. Le mieux est l'ennemi du bon—լաւագոյնը լաւի թշնամին է։ Մշակենք լաւագոյնը, բայց դեռ լաւը ընդունենք։

Հետզհետէ խօսում են Հաշիև, Ջունկովսկի (Փոխարքայի խորհրդի անդամ) և Ա. Խատիսեան։

Ա. Խատիսեան համեմատում է հայ-Թրքական համագումարի պատգամաւորների վիճակը ներկայ հարցում այն բժշկի վիճակի հետ, որին կանչել են ծանր հիւանդի մօտ։ Բժիշկը կարող է գլխից ռադ անելու համար որ և է մի դեղ նշանակել, բայց բարեխիղճ բժիշկը ուղղակի կասէ շրջապատողներին հիւանդի անյոյս լինելը։ Մենք հայերս կամենում ենք այս հարցում բարեխղճութեամբ ասել ձեզ, թէ մենք դեղ, դարման չը գիտենք։ Մենք չենք կամենում ենթարկել մուսուլման ժողովուրդը կորստեան, մալարիայի և այլն—դա մեզ համար ամօթալի կը լինէր, մենք ասում ենք միայն, որ պատասխանատու լինել չենք կարող։

Նախ. Մալամա ձևակերպում է վիճաբանութիւնները հետևեալ կերպով. քոչին արգելք չէ դրվում և կառավարութեան է թողնվում անհրաժեշտ միջոցները ձեռք առնել՝ որ ընդհարումներ չը լինեն, իսկ քոչի հարցի արմատական լուծման համար պէտք է կազմվի առանձին յանձնաժողով՝ մասնակցութեամբ երկու ազգերի ներկայացուցիչների։

Նիստը փակվեց ժամը 6-ին։ Յաջորդ, վեցերորդ, նիստը նշանակվեց երկուշաբթի, փետրվարի 27-ին։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Շիրակ—Ղարսի շրջան, 23 փետրվարի։ Մեզանում բնակվող խառն ազգութիւնների մէջ հայութիւնը քիչ տոկոսով առաւելութիւն է կազմում մուսուլմաններից։ Կան ռուս և Թուրքախօս յոյն գիւղեր մասնաւորապէս։ Քուրդեր աստանդական են և սեփական բնակութիւն չունեն։

Չը նայելով Կովկասում Թափված անմեղ արեան, որի արձագանքը կրկնվում է միշտ, Շիրակը մինչև օրս պահպանել է իր նախկին խաղաղութիւնը դրացի մուսուլման ազգաբնակութեան հետ, խոյս տալով բարդութիւններից։ Թուրքերը միշտ ակնածել են դէպի հայերը, վախենալով, որ ինչ իրանք են արել Թուրքաշատ տեղում, նոյնը կանեն և հայերը վրէժխնդրութեամբ այստեղ, բայց հայերը, ինչպէս միշտ, ամեն տեղ տեղիք չեն տուել կռուի։

Ճիշդ աղբիւրից տեղեկութիւն հասաւ, որ Թուրքերը արդէն սկսել են կազմակերպվել. ամեն գիւղ իր կազմն ունի։ Նորերս մի խումբ ազդեցիկ աղաներ և մոլլաներ են մտնում Շիրակ, Զարիշատի, Աղբաբայի և Չլդրի Թուրքերից և քուրդերից, որոնք զինված են եղել ամեն տեսակ հրացաններով և փամփուշտներով։ Ժողով են հրաւիրում տեղիս ազդեցիկներին մօտակայ օսմանցիաբնակ Թիքնիզ գիւղում։ Ժողովի նպատակն է եղել, «սերտ յարաբերութիւն և դաշնակցական կապ հաստատել Շիրակի և սահմանակից Թուրքաշատ գաւառակների հետ, պատրաստել բոլորին և պրօպագանդա անել բոլոր մուսուլման գիւղերում»։

Չը նայելով որ խռովութիւնների սկզբից մինչև օրս ամեն Թուրքի բերանից միշտ լըսված է եղել. «Բիզ կոմշիյա, նալհաղ շէյթանա» խաղաղարար բառերը, սակայն շնորհիւ Զարիշատի վայրենի լեռնականների, յայտնի չարագործ Ղուրբան էֆենդու ճուտերի երևում է դաւադրութիւն խաղաղ դաշտեցուն գրգռելու համար երևակայական չար Թալաններով։ Երբ խօսք է լինում, ասում են. «այ բիշի, բիզ օնլարա կուլախ ասմրախ, աւխէին օլուն» և սրա նման շատ խօսքեր, մենք էլ հալած իւղի տեղ դնելով՝ հանգիստ քնում ենք։ Ժողովից 8 օր յետոյ, Համզաքարակ գիւղից մի 16 տարեկան խեղճ պատանի ծառայութեան տեղից վերադառնալիս է լինում հայ Թիքնիզ գիւղը։ Ճանապարհին Թուրքաբնակ Արգինայի սահմանից անցնելիս, պատահում է մի ձորակում երկու Թուրք ձիաւորների, որոնք իջնելով ձիերից և օգտվելով միայնակութիւնից, գլխանոցը փաթաթում են թշուառ Վարդանի վիզը և ծայրերից ձգելով՝ ուզում են խեղդամահ անել, ականջ չը դնելով խեղճի լացին։ Մի քանի րոպէ չարչարելուց պատանին վայր է ընկնում կիսամեռ։ Բաղդի բերմամբ զառիվայրից յայտնվում է մի սահնակ, որը տեսնելով չարագործները, ձիերը նստում և անհետանում են ձորում։ Սահնակաւոր ռուսը միայնակ լինելով՝ տեսել և նկատել էր եղեռնագործութիւնը և մօտենալով անշնչացած դիակին, կարծել է թէ բոլորովին սպանված է մտրակում է ձիերին և իր անձը ազատում։ Երկու ժամ մնալուց յետոյ, Վարդանը կամաց կամաց ուշքի է գալիս, և ոյժ տալով իրան՝ հազիւ հասնում է կրկին Համզաքարակ և պատմում է պատահածի մասին։ Յոյս չունենալով տեղական վարչութիւնից, աւելորդ են համարում յայտնել։ Պարզ հասկացվում է Թուրք ժողովների նպատակը պատանու սպանութեան փորձում։ Աղէտը կրիայի քայլերով է մօտենում խաղաղ շրջակայքին, դրդված Զարիշատի տիրահռչակ Ղուրբան էֆենդու և իր արբանեակ Քամար օղլու և քուրդ Ասլան բէգերից։ Արդէն քանդված է Թուրքերի ձեռքով մեր ամբարանոցը և փայտերը տարված։

Ամեն օր, ինչպէս հաւաստիացնում են, Թուրք գիւղերում լինում են ժողովներ, կարգադրվում են առանձնապէս Թռուցիկներ և Թղթեր Թուրք նշանաւոր մարդկանցից։ Կառավարութիւնը չէ էլ ուզում տեսնել կամ լսել։ Մեր ապագան առաջիկայ գարնան համար շատ մութն է։

Յ. Բ.

Ալիսաթիանու կռիւ (Զանգեզուրի գաւառ)։ Փետրվար ամսի 1-ին, երկու կժաձօր գիւղացի (Նախիջևանի գաւառից) և 1 Բռնակոթ գիւղացի, նաւթ, աղ և շաքար էին տանում դէպի Լոր և Գետաթաղ գիւղերը ծախելու։ Երբ բարձրանում են Ալիսաթիանու սարը, Թուրքերը, թւով 15 հոգի զինված, շրջապատում են այդ երեք հայերին և բռնում են 2 կժաձորցիներին, իսկ բռնակոթցուն աջողվում է փախչել և հաւար ձգել։ Ալիսաթիանցիները իմանալով գործի եղելութիւնը, իսկոյն դուրս եկան գիւղից յետ խլելու Թուրքերից բռնված հայերին, սակայն Թուրքերը սկսեցին կարկուտ պէս գնդակ Թափել հայերի գլխին։ Հայերը զգացին, որ արդէն պաշարված են Թուրքերով, բայց որովհետև օրը մըշուշային էր, Թշնամին մօտ տեղերից չէր երևում։ Հայերը պաշտպանողական դիրք բռնեցին. մշուշը քաշվեց, Թշնամին երևաց հայ գիւղի մօտի դիրքերում։ Մերոնք աշխատում էին Թշնամուն հանել մօտի դիրքերից և ահա այդ ժամանակ զոհվեց մերոնցից քաջարի երիտասարդ Նախշի Մովսիսեանը։ Ալիսաթիանու երիտասարդները, տեսնելով իրանց քաջ եղբօր զոհվելը, լցվեցան վրէժխնդրութեան ոգով և առիւծի պէս գրոհ տուին առաջ, Թշնամուն հանեցին մօտի դիրքերից, մի քանիսին գլորելով։ Հասան Բանինիսի, Տլորսի երիտասարդները։ Հայերը կռւում էին քաջաբար եօթը Թուրք գիւղերի և 200 Թուրքերի դէմ, որոնք անցել էին Նախիջևանի գաւառից։

Վերջապէս հասան ազգային հերոս Բեւին, Արսէնը և միւս գիւղերի երիտասարդները։ Բեւին կանչեց. «տղայք, ձեր հոգուն մեռնեմ, առաջ»։ Ալիսաթիանու քաջերը արծւի պէս սլացան առաջ և Թշնամուն հանեցին իրանց դիրքերից. այն ժամանակ Թուրք խուժանը դիմեց փախուստի։ Հայերը դիրք բռնեցին Թուրք գիւղի մօտ։ Բեւին սլացաւ դէպի դիրքերը և հրաման արձակեց առաջ խաղալ։ Հայ կտրիճները առաջ խաղացին և դիրք մտան Թուրք Շխլար գիւղի պատերի տակ։ Մութը պատեց. Թուրքերը ինչ որ մտադրվել էին գնել հայերի գլխին, այժմս իրանք էին Թակարդն ընկել. Թուրք գիւղում փախչող փախչողի էր, իւրաքանչիւրը իր գլուխն էր ուզում ազատել, և անէծք էին կարդում մարդամզարին։ Բայց հայերը վեհանձնաբար առանց վնաս տալու գիւղին, յետ քաշվեցին միմիայն Թուրքերին հասկացրին, որ այն, ինչ որ մտածել էին հայերին անել, իրանց գլուխը կը գայ։ Թուրքերը Թող մտքներիցը հանեն ինչ որ մտածում են։

Ականատես

Ի՞ՆՉ ԵՆ ԱՍՈՒՄ

Այն րոպէին, երբ պարսկական սահմանագծի վրա կենտրօնացել են Թիւրքական զօրքը, նորից հարց է ծագում թէ ինչ դիրք կը բռնէ արդեօք համիսլամութեան գաղափարը ներկայ դէպքում. կը նպաստէ երկու մահմեդական պետութիւնների ընդհարման, թէ ընդհակառակը կը խեղդէ բռնկումը։ Հետաքրքիր էր առաջ բերել այդ հարցի մասին մի յօդուած, որի հեղինակը կանգնած է համաժողովի մահմեդական ներկայացուցիչների շարքում, մի անձ, որ դեռ ես երէկ մեզ մեղադրում էր շիայի և սիւննիի միջև պառակտում գցող, մի անձ, որը հէնց նոյն տան միջից էլ ծանօթ այդ տան բոլոր դէմքերին ու բոլոր անկիւններին, և բաց է արել իր բերանը այն ժամանակ, երբ նրան շատ նեղն են դրել, երբ փորձել են նրան գրկել համիսլամական կարկանդակից։

Այդ անձը կոչվում է Մահմեդ աղա Շահթախտինսկի, նախկին խմբագիր «Շարքի-Ռուս» լրագրի, որի № 162-ում տպել է հետևեալը բառ առ բառ։

Կ. Պօլսում մահմեդական ազգերի միութեան կամ համիսլամութեան գաղափարը հետևեալ կերպով ծնունդ առաւ. «Եւրոպական պետութիւնները ուզում են օսմանեան կայսրութիւնը աշխարհի երեսից ջնջել, նրանք ձգտում են այդ կերպով ոչնչացնել իսլամական կրօնը։ Օսմանեան փադիշահը՝ մարգարէի յաջորդն է. Խալիֆէն կրօնքի մարմնացումն է, Մարգարէի փոխանորդը աշխարհի վրա։ Առանց նրան իսլամական կրօնքի գոյութիւնը անկարելի է։ Նա Մէքքէի և Մէդինէի պաշտպանն է։ Ուխտագնացութիւնը (հաջ) և տիեզերքի պարծանք կազմող Մարգարէի սուրբ գերեզմանին այցելութիւնը, իսլամական շէնքի հիմնաքարերն են։ Առանց Մէքքէի, Մէդինէի, Խալիֆայի իսլամութիւն չկայ։ Հետևաբար ամեն մի մուսուլման իր կարողութեան չափով պէտք է աշխատի օսմանեան պետութեան յարատեւութեան»։

Պ. Շահթախտինսկին այս խօսքերով բնորոշելուց յետոյ թէ ինչպէս ծագում է առել համիսլամական շարժումը Կ. Պօլսում, շարունակում է.

«Թէ իր ժողովրդի և թէ օտար երկրներում ապրող մահմեդականների մէջ համիսլամութեան գաղափարը տարածելու համար օսմանեան կառավարութիւնը ամեն ջանք գործ է դնում ներկայումս։ Ներքին քաղաքականութեան մէջ այդ շարժման հետևանքն այն եղաւ, որ օսմանեան կառավարութիւնը եւրոպական բոլոր կուլտուրական հիմնարկութիւնները մերժեց այնուհետև մտցնել իր վարչութեան մէջ։ Սուլթան Մէջիդ ձգտում էր իսլամութիւնն և եւրոպական քաղաքակրթութիւնը ի մի ձուլել։ Այդ ծրագրից հրաժարվեցին և մինչև անգամ սկսեցին ծաղրանքով, հեգնութեամբ վերաբերվել դէպի եւրոպական քաղաքակրթութիւնը։ Օսմանեան պետութեան մէջ ապրող արաբ և քիւրդ ցեղերը առ երեսս միայն հպատակ էին. նրանք սրտով շատ սառն էին և նոյն իսկ չարակամ վերաբերմունք էին ցոյց տալիս դէպի օսմանեան գահը։ Այժմ օսմանեան կառավարութիւնն աշխատում է համիսլամութեան գաղափարը նրանց մէջ տարածել, անկեղծօրէն նրանց կապել իրան և դարձնել նրանց կոյր գործիքներ իր ձեռքում։ Կ. Պօլսում այդ նպատակով քիւրդ և արաբ ցեղապետների զաւակների համար հիմնվեց մի առանձին ուսումնարան, որպէս զի նրանք՝ արաբ և քիւրդ ցեղապետների որդիքը՝ աշխատեն ծաւալել և զօրացնել օսմանեան ազդեցութիւնը Ասիայում և Աֆրիկայում։ Նախ Քիւրդիստանի և ապա Արաբիայի մէջ կազմակերպված «Համիդէ» կոչվող հեծելազօրքի նպատակը միևնոյնն է—նոյնպէս դարձնել այդ անհնազանդ տարրերը օսմանեան գահին։ Անգլիական և ֆրանսիական զօրքերը Եգիպտոս և Տունիզ ոտք չկոխած՝ Կ. Պօլսի դիւանագէտները շատ աշխատեցին, որ համիսլամութեան գաղափարը մտցնելով եգիպտացիների և տունիզցիների մէջ նրանց կապեն օսմանեան կայսրութեան և նոր ուժեր ձեռք բերեն։ Բայց օտար տիրապետութիւնը այդ բոլոր ջանքերը ապարդիւն հանեց։ Համիսլամութեան գործակալները, էմիսարները թէև Աֆրիկայի ուրիշ ցեղերի մէջ շատ ման եկան, բայց ազդեցութիւն չունեցան։ Որովհետև դժուար եղաւ արաբների ուղեղի մէջ մտցնել այն միտքը թէ մի Թուրք փադիշահ կարող է արաբ Մարգարէի յաջորդ լինել։ Համիսլամութիւնը՝ Հնդկաստանի իսլամների մէջ շատ աւելի մեծ աջողութիւն գտաւ, քան նոյն իսկ օսմանեան երկրում։ Հնդիկ մահմեդականները՝ նվիրական Մէքքէի և Մէդինէի պաշտպան Խալիֆային նիւթական գոհողութիւններ անելու մեծ յօժարութիւն ցոյց տուին։ Օսմանեան կառավարութիւնը շտապեց օգտվել այդ բարի տրամադրութիւնից և սկսեց կառուցանել Հիջազի երկաթուղին։ Ծախքին մասնակցեցին բոլոր մահմեդականները թէ օսմանեան երկրում և թէ ուրիշ տեղերում. բայց այդ շինութեան ամենամեծ օգնութիւն, նպաստ հասցրին Հնդկաստանի մահմեդականները»։

«Շարքի-Ռուս»-ի խմբագիրը այնուհետև խօսելով համիսլամութեան գաղափարի՝ Պարսկաստանի մահմեդականների մէջ գտած ընդունելութեան մասին, հաստատում է որ այդ միտքը Պարսկաստանում մեծ հող չը գտաւ, որովհետև այդ շարժումը՝ որքան նպաստաւոր՝ օսմանեան պետութեան, նոյնքան վտանգաւոր էր Շահի կառավարութեան։ Դրա համար էլ համիսլամականները ոչ-բարեացակամ վերաբերմունք են ցոյց տալիս դէպի պարսիկները։

«Համիսլամականները—շարունակում է պ. Շահթախտինսկին—ձգտում են շիաներին սիւննի դարձնել և ջնջել աշխարհից շիաութիւնը։ Նրանց կարծիքով շիա կրօնը և պարսիկ տէրութիւնը արգելք և պատուար են համիսլամութեան և չեն թոյլ տալիս, որ իսլամութեան Խալիֆան, օսմանցիների Թագաւորը իր ազդեցութիւնը տարածէ ամբողջ Ասիայի մահմեդականների վրա, իր երկրի սահմանները կցնէ Ասիայի միւս մահմեդականների երկրին (Հնդկաստանին)։ Այսպէս, համիսլամիստները մի կողմից աշխատում են շիա կրօնի վարկը կոտրել շիաների առաջ, իսկ միւս կողմից ջանք են գործ դնում հաւատացնելու պարսիկ ժողովրդին, որ եթէ այժմեան Կաջար Թագաւորական ցեղը գահազուրկ անելով՝ Պարսկաստանը՝ օսմանեան կայսրութեան մի մասը դարձնեն, պարսիկների երջանկութիւնն ու բարօրութիւնը բոլորովին ապահոված կլինենն։ Եւ այս նպատակով՝ համիսլամութեան կուսակից շիա գրողները՝ շիաութիւնը տկարացնելու համար, բացարձակ կամ քօղի տակ քարոզում են թէ իսկական մահմեդականները Կ. Պօլսի մահմեդականներն են։ Իսկ Թէհրանի մահմեդականները կեղծ մահմեդականներ են։

Մեհմեդ աղան մոռացել էր այս բոլոր գրածները, երբ սկսեց հայերին մեղադրել իբրև շիաութեան և սիւննիութեան մէջ որոմ սերմանողներ։

Իրանի Թագաւորութիւնը համիսլամիստների զոհ բերել աշխատող առաջին անձը եղել է աւղանիստանցի հռչակաւոր շէյխ Ջէմալէդդինը, որը պարսիկ կառավարութեան պաշտօնական յայտարարութեան համաձայն մեղսակից էր Նասրէդդին Շահի սպանութեան գործում։ Եթէ այս իրողութիւնը չը հաշւենք, կարելի է ասել, որ մինչև այժմ համիսլամութեան գաղափարի յաղթանակի համար ոչ մի գործնական քայլ չէ առնված Պարսկաստանում։ Ամեն տեղ համիսլամիստները աշխատում են, որ մահմեդականները կրօնական պարտականութիւն համարեն օսմանեան պետութեան և խալիֆայութեան գոյութեան պահպանութիւնը»։

Համիսլամութեան մասին այս հետաքրքիր տեղեկութիւնները տալուց յետոյ պ. Շահթախտինսկին հետևեալ կերպով էր գնահատում համիսլամական ջանքերը։

Համիսլամականների՝ քրիստոնեայ պետութիւններում ապրող մահմեդականների պատճառած բարոյական վնասը նրանում է, որ նրանք աշխատում են քրիստոնեայ պետութիւնները թշնամի ցոյց տալ իսլամ կրօնին։ Եւ այդ կերպով նրանք՝ քրիստոնեայ պետութիւնների մահմեդական հպատակներին խրտնեցնում են իրանց իշխող կառավարութիւններից... Բացի այդ՝ համիսլամիստները թշնամութեամբ վերաբերվելով դէպի եւրոպական քաղաքակրթութիւնը, պատճառ են դառնում, որ եւրոպական պետութիւնների իսլամ հպատակները չօգտվեն այդ քաղաքակրթութիւնից և յետադիմեն։ Բայց համիսլամիստների մեծագոյն վնասն այն է, որ նրանք կրօնքը քաղաքական շահերի գործիք են դարձնում։ Օսմանցիները տկարացել են և անկարող են լինում իրանց երկիրը պաշտպանելու։ Ափսոս. բայց Թող աշխատեն, ջանք գործ դնեն. եւրոպացիների նման Թող իրանք էլ աշխատեն իրանց երկրի բարեկարգութեան։ Շատ հաւանական է, որ այդ եղանակով նրանց էլ աջողվի իրանց սեփական կարողութեամբ պահպանել իրանց երկիրը։ Հակառակ դէպքում ինչ շահ ունի Հնդկաստանի մահմեդականը, օսմանեան պետութեան յարատեւութիւնից կամ անկումից։ Ամբողջ իսլամութեան ոչ մի վնաս չի հասնի, եթէ օսմանեան կայսրութիւնը բնաջինջ լինի կամ մնայ։ Իսլամութիւնը 14 դարից ի վեր գոյութիւն ունի. Նրան հետևողները հետզհետէ աճում են...։ Աստուած մի արասցէ, եթէ օսմանեան կայսրութիւնը աշխարհից վերացվի, Մէքքէի և Մէդինէի պաշտպանութեան գործը Եգիպտոսի Խդիվին կը յանձնվի։ Դէպի Մէքքէ Մարգարէի գերեզմանին ուխտագնացութիւնը և այցելութիւնը աւելի հանգիստ և բազմամարդ կը լինի։ Մահմեդականների խալիֆայութիւնը կաթոլիկների պապութեան չէ նմանվում։ Խալիֆայութիւնը զուտ պատուի մի տիտղոս է. եթէ օսմանցի փադիշահները այդ տիտղոսը կրելուց դադարեն, Եգիպտոսի Խդիվը կարող է կրել։ Հէնց այժմ էլ, չը նայած որ օսմանցիների սուլթանը կայ, Մարոկկոյի սուլթանը իրան Խալիֆա է անուանում։ Մի խօսքով, եթէ համիսլամութեան գաղափարը ջնջվի, իսլամութիւնը աւելի կը օգտվի քան կը վնասվի։

Սրանք այնպիսի սարսափելի մերկացումներ էին, որոնք պահանջում էին «Շարքի-Ռուս»-ի գլուխը։ Մահմէդ աղան պէտք է քաւէր իր դաւաճանութիւնը։ Ու նա քաւում է, և այն ձևով, որը բոլորին յայտնի է։

Ո՛չ ոք, ոչ մի ժամանակ չէ կարողացել խօսել պանիսլամիզմի մասին այնպիսի հեղինակաւոր կերպով, որքան Մահմեդ աղա Շահթախտինսկին։ Ո՛չ ոք ոչ մի ժամանակ չէ կարողացել պանիսլամիզմի վտանգները նկարագրել այնպիսի վառ ու կենդանի գոյներով, —վտանգները՝ թէ հէնց իրա մահմեդական ժողովրդի և թէ այն կառավարութիւնների համար, որոնց տակ ապրում են—որքան ինքը՝ Հին-Նախիջևանի ներկայացուցիչը։

Տ. Զաւէն

ԷՋՄԻԱԾՆԻ ՃԵՄԱՐԱՆԻ ՕՐԱԳՐԻՑ

II

Փետրվարի 19-ի մանիֆեստը։—Բայց չը սխալվես, ընթերցող, ոչ թէ 1861-ի, այլ 1906-ի, ոչ թէ Ռուսաստանի, այլ ճեմարանի։

Ի՞նչ հաւասարապէս նշանակալից պատմական մեծ օրեր...

Անմոռաց է փետրվարի 19-ը ռուս մուժիկի կեանքում։

Այժմ այդ օրը անմոռաց կը մնայ նաև ճեմարանցու կեանքում...

Պատմական խորիմաստ զուգադիպութիւն՝ թէ բիւրոկրատիկ կղերականութեան հանձարեղ գլխի կանխամտածված մի քայլ, երկրորդ անգամ յաւերժացնելու այդ օրը։

Մօտ կէս դար յետոյ...

Փետրվարի 19-ին մուժիկի ճորտութիւնից ազատութեան տարեդարձին ճեմարանի լրջութեան և խոհունութեան մարմնացում սրբազան վարչութիւնը բարձրագոյնս բարեհաճել է աշակերտութեան տալ ազատութիւններ, սակայն ոչ թէ չորս, այլ երկու...

Ճեմարանի աշակերտութեան 52 (ըստ առաջին խմբագրութեան) պահանջներից կղերների վերին պալատը վերջապէս մի քանի ծանր ու խոհուն նիստերից յետոյ հաճել է ապօրինի և կորստաբեր չը համարել աշակերտութեան համար երկու բան միայն.

1. Ճեմարանի աշակերտութիւնը կարող է ունենալ իր աշակերտական օրգանը։

Մի բան, որ ունեցել է և ունի, ինչպէս ծածուկ։ Սակայն այժմ այն ազատութեամբ, որ հայր տեսչին յայտնի պէտք է լինի պատասխանատու խմբագիրը, որպէսզի աշակերտները պատշաճութեան սահմանի մէջ մնան...

Ուրեմն առաջին ազատութիւնը ցենզուրայի կամ կապանքի արտօնութիւն է տալիս։

2. Աշակերտութեան համար (սկսած Դ. դասարանից) ընթերցարան կը բացվի ճեմարանում։

Այս էլ նոր չէ կամ նոր բան չի լինի. լսարանցիները գնում էին վանքի ընթերցարանը, ուր դուք միայն կիսամեռ, շատ շատ եռամեայ օրաթերթեր կը գտնէք, այն էլ վարդապետների գրպանից ընկած, կորած №№։ Յուսով ենք, որ նոյնը կը լինի և ճեմարանի ընթերցարանը։

Ընթերցող, մի՛ կարծիր՝ թէ Բ. շնորհումով վերանում է թերթ չը ստանալու օրէնքը։ Բնաւ։ Նա մնում է, որպէսզի արգելված պտուղը աւելի քաղցրացնի (°) և դրանով...

Ի՞նչ են արել ո՜ր... ընդամենը միայն կէս հարիւրեակ պահանջներ են անտես առել...

Մանիֆեստների այս սովորական կարիկատուրան լրացնելու համար մի մանիֆեստացիա էր միայն պակասում, իսկ, եթէ ճիշտ է այն, որ այդ օրը մի քանի ուսանողներ ի նշան ուրախութեան և յաղթութեան մի 1874 թուից մնացած փէս են սուզել իբրև ցոյց Ներսիսեան լճի մէջ—ապա՝ ամեն ինչ կատարեալ է։

Նմանութիւն չըկայ չէ՞ այս երկու շնորհումների և պետական ազատութիւնների մէջ...

Անօրինակ ու անզուգական շնորհում—կարկատաններ։

Հէգ վերիններ, ձե՞զ էք ծաղրում, վեհերի՞դ թէ՞ ցածրերին...

Սակայն չէ՞ որ դուք այդ փշրանքները ձեր մսից, կաշուց էք կտրում, իսկ սեփական կաշուց միթէ կարելի է առատ ու մեծ պատառներ կտրել, տալ...

Չէ, սուրբ հայրեր, մի քիչ էլ խելացի եղէք։ Շուտ թէ մի քիչ ուշ, դուք պէտք է տեղի տաք, ձեր փառս—փուչն քաշէք ուսման գործից։

Ուստի թողէք ամբողջ հայութիւնը հոգևոր դարձնելու բանդագուշանքը։

Հասկացէք, որ կեանք կայ, կեա՜նք... աշխարհիկ ամբոխ կայ,—աշխատաւոր, տանջվող ժողովուրդ իր իր բիւր ցաւերով ու դարդերով, կարիքներով ու չարիքներով, որին աշխարհիկ դպրոց է հարկաւոր իր տանջանքները թեթևացնելու համար։

Հասկացէք վերջապէս, և ձեր ապիկարութիւնը խոստովանելով՝ տեղի՜ տուէք։

Վ. Սիրտ

ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՈՉ, ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Հայրենակիցներ,

Ահա, տարի մըն է, որ Կովկասի հայութիւնը անհաւասար և կատաղի կռիւ մը կը մղէ բարբարոս ցեղի մը դէմ, Թաթարներուն, որոնց ուժ կուտայ մէկ կողմէն ռուսական կոյր պաշտօնէութիւնը, և միւս կողմէն՝ Եըլդըզը...

Կոտորածներու շարքը իրար կը յաջորդեն—Պաքու, Երևան, Զանգեզուր, Շուշի. այսօր ալ Գանձակն է, որ արիւնի մէջ կը լողայ, և արիւնը կը հոսի մինչև իսկ Թիֆլիսի մէջ... Փոխարքայի քթին տակ։ Հայրենակիցներ, ազգային այս մեծ դժբախտութիւններուն մէջ, մեզի կսփոփէ ու կը քաջալերէ ռազմական այն խրոխտ ոգին, որ փայլուն կերպով ցոյց տուին մեր կովկասահայ եղբայրները... Քիչ չէ թիւը թշնամիներուն, որոնք ինկան հայ քաջերու գնդակներուն տակ։

Զոհերը կողբանք մենք—յարգանք անոնց նուիրական յիշատակին—բայց աւելի բան մը պարտինք ընել անոնց համար, որոնք կսեցան ու ազատեցին կեանքերնին, բայց կորսնցուցին իրենց բոլոր ունեցածը։ Թաթարը կողոպտեց, յափշտակեց կրցածը, տանել չկրցածը հրդեհեց—և այսօր հազարաւոր թշուառ գիւղացիներ մերկ են, անպատսպար և անօթի...

Հայրենակից եղբայրներ, Օսմ. Հայաստանը ճարակող 1880-ի սովի ատեն, Կովկասի հայը լիաբուռն օգնեց մեր թշուառներուն։ 1895—96-ի մեծ ջարդերէ փախստական եղող 40,000 հայ Կովկասի մէջ պատսպարուեցաւ, խնամուեցաւ ու դեռ կապրի։ Յիշենք այս դէպքերը, գիտնանք թէ եղբայրական հասարակ պարտականութենէ մը աւելին կը պարտինք կովկասահայուն։

Տաճկահայ եղբայրներ, օգնենք Կովկասին, գէթ նիւթապէս, հոգ չէ թէ մանր ըլլայ մեր նուէրը, օգնենք, մեր խորին համակրանքը յայտնելու համար այդ քաջ մարտիկներուն։

Օգնենք, ապացուցանելու համար աշխարհին, որ մենք մեռած ժողովուրդ մը չենք, ցուցնելու համար մեր ցեղի թշնամիներուն, թէ հայութիւնը եռամոլ, անմիաբան, բաժան բաժան եղած, խեղճ զուրկ մարդոց խումբ մը չէ, ցուցնենք թէ հայը ազգութիւն մըն է, գիտակից իր համազգային ճակատագրին։

Ամերիկահայ եղբայրներ, մինչև հիմա օգնութեան կազմակերպումը ցանցառ երևոյթ մը ունեցաւ։ Ուստի կոչ մը կընենք ամենուն, ամեն մէկուն, որ փութան օգնել Կովկասին։

Ամեն կազմակերպութիւն՝ բարեգործական, կրթասիրական, եկեղեցական կամ յեղափոխական, կրնայ նախաձեռնարկ ըլլալ այս գործին—իւրաքանչիւր գաղութի մէջ—քանի որ այս գործը վեր է կրօնական և կուսակցական ամեն յարանուանութենէ։

Փութանք ուրեմն։

Հ. Յ. Դ. Ամերիկայի կեդր. կոմիտէ

Յունուար 27, 1906 (Կնիք)

Յ. Գ.—Ամեն գաղութ նուէրները կրնայ խրկել ուղղակի Վեհ. Կաթողիկոսի կողմէն հաստատուած յանձնախումբին, որու նախագահն է Թիֆլիսի թեմին առաջնորդը, իսկ գանձապետն է Պն. Ա. Մելիք-Ազարեանց։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, փետրվարի 27-ին

Անցեալ նոյեմբերի 23-ին, հայ և թուրք ընդհարումների ժամանակ, Թիւրքեայ Վան գաւառի Ալճաւազ գիւղի բնակիչ Սողոմոն Տէր-Մկրտչեանցն ներկայացաւ էր Թիֆլիսի Հրեշտակապետաց եկեղեցում։ Գազանացած թուրք խուժանը, յարձակվելով նոյն եկեղեցու գաւթում բնակիչների վրայ, խղճալի տիրացուն անվեհեր դիմադրեց կատաղի յարձակմանը, միայն հազիւ կարողացաւ իր գերդաստանն ազատել նրանց ճանկերից, իսկ ունեցած կարողութիւնն ամբողջապէս կողոպտեցին։ Նա վաղածանօթ էր Աստուածընկալցի Մնացական Սահակեանին, որը այժմս ժամկոչ է ս. Կարապետ եկեղեցում։ Երեք ամիս է սրա տանն էր բնակվում և չունենալով օրական գոնէ չոր հաց ճարելու միջոց, յիշեալ ժամկոչն էր նրա պատսպարում նրան։ Խղճալի տիրացուն կորցնելով իր ունեցածը, մտածմունքի մէջ խորասուզվելով՝ հիւանդութեան ենթարկվեց. ներկայ փետրվարի 26-ին տարան Միքայէլեան հիւանդանոցը, ուր և վախճանվեց։

Հայ հասարակութեան ուշադրութիւնն եմ հրաւիրում յիշեալ թշուառի անօգնական ընտանիքի վրայ. հանգուցեալի դիակը անտէր մնացած է հիւանդանոցում և նրա թաղման ծախսը հոգացող չը կայ։ Յուղարկաւորութիւնը պիտի լինի առաջիկայ մարտի 1-ին, ս. Կարապետ եկեղեցուց դէպի Խօջիվանքի գերեզմանատունը։

Յ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մօտ ժամանակներս յայտարարվելու են պարտադիր կանոններ Բորչալուի գաւառի համար, որոնց մէջ ամենագլխաւոր տեղը բռնում են այն միջոցները, որով հայ-թուրքական ընդհարումների առաջը պէտք է առնվեն։ Ընդհարումների դրդիչները կը դատվեն զինուորական դատարանով։ Նոյն բաղդին կարժանանան և յարձակվող կողմերը, որոնք կը բռնվեն յանցանքի տեղում։ Առաջարկվելու է վճարել բոլոր արքունական տուրքերը։ Ջարդերից ու խառնակութիւններից առաջացած բոլոր վնասները պէտք է վճարէ յարձակվող կողմը և այլն։

—

Գեներալ Գոլոշչապովը 400 կոզակներով ժամանեց Ղզլար գիւղը և պահանջեց գիւղացիներից 12 ժամում հաւաքել և վճարել 3000 րուբլի այն պատճառով, որ իբրև թէ հրացան են պարպել զօրքի մթերատար մասի վրայ։

—

Նովոռոսսիյսկի քաղաքագլուխ Նիկուլինը և ինտելլիգենցիայի շատ ներկայացուցիչներ յանձնվում են կովկասեան զինուորական-նահանգական դատարանին, և մեղադրվում են զինված ապստամբութիւն նախապատրաստելու և ժամանակաւոր կառավարութիւն հիմնելու համար։ «Русь»

—

Թիֆլիսի Ժողովարանը հետզհետէ սկսում է կենդանութեան նշաններ ցոյց տալ. անդամները, որոնք աղետալի անցքերից յետոյ սառեցին և ընդհատեցին միմեանց տեսութիւնը և մտքերի փոխանակութիւնը, սկսել են փոքր առ փոքր յաճախել այդ անդրանիկ կլուբը և հետաքրքրվել միմեանց վիճակով։ Երբեմն աջողվում է և ներկայացումներ և նուագահանդէսներ սարքել և թէպէտ տիրող դեռ ևս անհանգիստ դրութիւնը ստիպում է շատերին չը յաճախել, բայց և այնպէս բազմութիւն երևում է և մեռած կեանքը արթնանում է։ Հինգշաբթի, մարտի 2-ին, նոյնպէս նշանակված է ներկայացում այդ Ժողովարանում։

—

Կիրակի, փետրվարի 26-ին, հրատարակվեց «Кукуреку» ռուսերէն շաբաթական գեղարուեստական-երգիծաբանական թերթի առաջին համարը, որը սակայն նոյն օրը և եթ գրավվեց։

—

Փետրվարի 26-ից Թիֆլիսում սկսեցին լոյս տեսնել երկու օրաթերթեր. ռուսերէն լեզուով «Кавказское Утро» Շ. Ե. Դավիդովի խմբագրութեամբ և վրացերէն լեզուով «Ախալի Դրօեբա» (Նոր ժամանակ) երդուեալ հաւատարմատարի օգնական Լ. Լ. Բախտաձէի խմբագրութեամբ։ Այս վերջինը լոյս է տեսնելու մարտի 1-ից

—

Կիրակի, փետրվարի 26-ին, ժամի 1-ին «Սեվեր. Նօմեր.» հիւրանոցի բակում լսվեց մի ուժգին տրաքոց, որ իրարանցում գցեց անցնող հասարակութեան մէջ. քննութիւնից պարզվեց որ, տրաքել է մօտորներից մէկը։

—

Բագուի ժամանակաւոր նահանգապետ Ֆադէևը թոյլատրել է Ի. Ֆրանչեսկիին վերստին հրատարակել «Бакинск. Жизнь» թերթը, որը, ինչպէս հաղորդում են, մօտ օրերս կը սկսի լոյս տեսնել։

—

Ներկայ տարվայ սկզբից մինչև վերջին օրերս, ամիս և կէսվայ ընթացքում մամուլի օրէնքները խախտելու համար 71 գործ է սկսված, որից 24 դէպքերի համար գրաւվել են թերթերի առանձին համարները։ Այդ տեղեկութիւնները վերաբերում են Պետերբուրգի պալատի մի շրջանին միայն։

—

Մարտ ամսի սկզբներում Թիֆլիսում լոյս է տեսնելու ամենօրեայ ռուսերէն մի թերթ «Впередъ» անունով։ Թերթի աշխատակիցներն են. Կապպա, Կարիբի, Ծուլուկի, Շահումեան, Կիկոլէ, Շարաշիձէ, Էմխվարի, Կօրա, Ծերեթելի, Սուլթանով, Գրազովէվ, Իշխանեան, Պիսարեւսկի, Շէստով և այլն։

—

Թիֆլիսի հայրենասիրական ընկերութեան օրգան «Голосъ Кавказа»-ի խմբագիր հրաւիրված է «Черноморск. Вѣстн.»-ի նախկին խմբագիր տերտեհանկ Գ. Ա. Պայլը։

—

Բարեգործների ուշադրութիւնն ենք դարձնում մի չքաւոր ընտանիքի վրայ, որի միակ որդին Սարգիս Բայազէտեանը (3-րդ գիմնազիայի աշակերտ) ուսման թոշակը չը վճարելու պատճառով ստիպված է զրկվել ուսումից։ Նուէրները խնդրում ենք ուղղել «Մշակ»-ի խմբագրատուն։

—

Հինգշաբթի, մարտի 2-ին, երգիչ Բարխուդարեան հանդէս կը գայ Լէօնկավալլոյի «Պայացներ» օպերայում։ Բարխուդարեանը դրամատիկական տէնօր է, որ մինչև այսօր երգել է միայն կօնցերտներում։ Այժմ նա փորձ է անում բեմ դուրս գալու օպերայում։ Նրա նախափորձը կամ դեբիւտը հետաքրքրական է։ Նա կերգէ Կանիօյի դերը։

—

Թիօնէթի նախկին գաւառապետ պ. Ֆօն-Բաումգարդէնը, ինչպէս լսում ենք, նշանակված է Ախալցխայի գաւառի հաշտարար միջնորդ։

—

Թիֆլիսի գեներալ նահանգապետի հրատարակած պարտադիր օրէնքների համաձայն փետրվարի 25-ին Դվորցովայա փողոցում բռնվել են չորս հոգի, որոնք գնում էին վելոսիպեդով։

—

Թիֆլիսի IV քաղաքամասի նախկին պրիստաւ Բաչուրինը, որ այժմս Գանձակի ոստիկանապետ է, Թիֆլիսի դատաստանական պալատի կողմից դատի է ենթարկվում Թիֆլիսի բնակիչ Ծովիանովին ծեծելու համար։

—

Թիֆլիսում հիմնվել է և արդէն սկսել է իր գործունէութիւնը վրացերէն գրքեր հրատարակելու համար մի ընկերութիւն «Գութանի» (գութան) անունով։ Ընկերութիւնը արդէն հրատարակել է, ռուսերէնից թարգմանված, վրացերէն լեզուով երկու գրքեր. 1) «Ի՞նչպէս պէտք է կատարել ժողովրդի ներկայացուցիչների ընտրութիւնը» (Ա. Նէգրովի) և 2) «Սով» (Экономическіе этюды А. Баха) Թէդօ Սախօկիայի թարգմանութեամբ։ Երկու գրքերի հրատարակութիւնը կատարվել է շատ մաքուր և էժան. առաջինը արժէ 2 կոպ. իսկ երկրորդը՝ 20 կոպ.։

—

Մօտ օրերումս Ա. Ի. Մանթաշեանի ֆիրման Բաթումում կը սկսի բանեցնել իր թիթեղի գործարանը, որ արտասահման վառելանիւթ արտահանելու համար թիթեղի արկղներ է պատրաստում։ Ինչպէս իր ժամանակին մամուլը հաղորդել էր, պ. Մանթաշեանի գործարանները փակվել են անցեալ տարվայ վերջերում, երկրի մէջ կատարվող վերջին անցքերի շնորհիւ, իսկ գլխաւորապէս բանւորական հարցի պատճառով, որ տեղական գործարանատէրերը չը կարողացան կարգաւորել, չը նայած նրանց արած բոլոր զիջումներին, ուստի ստիպված էին, որոնց թւում Ռօտշիլդն էլ, դադարեցնել թիթեղի ամաններով վառելանիւթ ուղարկելը, իսկ Մանթաշեանի ֆիրման ստիպված էր թիթեղի ամանների մէջ նաւթ լցնելու գործը փոխադրել Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքը։ Բազմաթիւ բանւորներ մնացին անգործ և զուրկ ապրուստի որ և է միջոցից։ Անգործ մնացած բանւորների մի մասը դիմեց բոլոր գործարանատէրերին յայտարարելով, որ եթէ գործարանները բացվեն, նրանք յանձն են առնում կարգապահութիւնը պահպանել գործարաններում, որպէս զի պարապմունքները ընթանան կանոնաւոր և «առանց գործադուլների»։ Ա. Ի. Մանթաշեանի ֆիրման առաջինը եղաւ, որ արձագանք տուեց այդ կոչին, լիայոյս, որ բանւորները իրանք կը հասկանան թէ որքան անհրաժեշտ է նրանց համար ներկայ ծանր օրերում աշխատելը, և վճռեց բաց անել իր գործարանը։ Պէտք է կարծել, որ Ռօտշիլդի ֆիրման նոյնպէս շուտով կը բանայ իր գործարանները, և այն ժամանակ Բաթումը կը մտնի իր սովորական կեանքի մէջ։ «Կ.»

—

Երէկ, փետրվարի 27-ին կողոպտված է Գօլովինսկի պրօսպէկտում, քաղաքային տան մէջ (նախկին Շիօէվի) գտնվող Արսէն Ավանեսեանի խանութը։ Գողերը ներս են մտել Ավանեսեանի դերձակի աշխատանոցի պատից և գողացել են մետաքսեղէն 10000 ր. արժողութեամբ։ Կասկածով ձերբակալված է Ավանեսեանի մի վրացի բանւորը։

—

«Պուր-Դվինօ» հիւրանոցի տէրը և ուրիշ վաճառականները, որոնք վնասվել են 1905 թ. փետրվարի 22-ին, դիմեցին բարձր իշխանութեանը միջնորդութեամբ, որով խնդրում են, աչքի առաջ ունենալով իրանց անտեսապէս քայքայումը, վճարել կրած վնասները։ Վարչութիւնը յայտնեց երէկ որ նրանց միջնորդութիւնը մերժված է։

—

Թիֆլիսի մեշչանների վարչութեան մէջ մինչև 1902 թիւը՝ հարկերը բաժանվում էր այդ դասակարգի իւրաքանչիւր ծխի վրայ՝ ծխի կարողութեան համեմատ, որը որոշում էր թաղական հարկաժողովը, ընտրված հարկատու դասակարգի լիազօրներից։ Այդ կարգը շատ դժգոհութիւնների պատճառ էր դառնում և տրտունջներին վերջ չը կար, որովհետև յաճախ՝ հարկերը բաժանելիս ծխերի վրայ անկանոն և անհամաչափ էին կատարվում։ Այնուհետև 1902 թուից, մեշչանների լիազօրների ընդհանուր ժողովը որոշեց, որպէս փորձ, հարկերը նշանակել իւրաքանչիւր ծխի անդամների թւի վրայ՝ ամեն մէկ անդամի համար նշանակելով տարեկան մէկ րուբլի հարկ։ Թէպէտ այս երկրորդ եղանակը աւելի պարզ ձև ունի և աւելի յարմարութիւններ է ներկայացնում հարկատու դասակարգի համար, բայց մի խոշոր պակասութիւն մոռացութեան է տուած, որը թէ վճարող դասի և թէ մեշչանների վարչութեան համար զգալի է շարունակ։ Այդ պակասութիւնը կայանում է նրանում, որ վարչութեան ցուցակներում 1902 թւականից, այդ նոր եղանակը մտցնելիս, աչքի չէ առնված մեռնողների թիւը և քանի հոգի ծխի մէջ գրված են, այնքան ր. պիտի վճարեն կենդանի մնացածները։ Այնպէս որ, եթէ 1902 թ. ծուխը ունի, դիցուք, 10 անդամ և դրանցից 7-ը արդէն մեռել են, մնացեալ 3-ը վճարում են 10 մարդու հարկը, այսինքն 3 րուբլու փոխանակ—10 րուբլի, մինչև որ կենդանի անդամները կը ներկայացնեն մեռածների մահվան վկայականները, որը, անտարակոյս անկանոն գործողութիւն է և շարունակ դժգոհութիւնների առիթ է տալիս։ Միւս կողմից պատահում է և այսպէս, որ 1902 թւականին ծխի անդամների թիւը դիցուք 5 հոգի է նշանակած, այն ինչ պիտի լինի 8-ը կամ 10-ը, հետևապէս՝ փոխանակ 8 կամ 10 րուբլու, վճարվում է միայն 5 ր.։ Այս անկանոնութեան պատճառն այն է, որ իր ժամանակին և մինչև այժմ պատշաճաւոր կարգադրութիւն չէ արված այդ անկանոնութիւնը վերացնելու՝ կամ լրագրների մէջ յայտարարելով և կամ, ինչպէս զինուորակոչութեան ատենում է—հոգևոր կոնսիստորիաների հետ բանակցելով և համաձայնութիւն կայացնելով՝ մեռնողների և 18 տարեկան հասակ ունեցողների մասին իր ժամանակ հաղորդելու (հարկը վճարվում է 18 տարեկան հասակից) ցուցակները կանոնաւոր պահելու և հետևապէս հարկերը արդարութեամբ բաժանելու բնակիչների մէջ։ Ներկայումս քանի որ մեշչանների վարչութեան գլուխ է կանգնած աւագի պաշտօնով պ. Դանդուրեանը, որը առաջադէմ և գործին ուշադիր անձն է և որի օրով դիւանատան և ընդհանուր գործավարութեան մէջ թարմ հոսանք է մտցրած, ցանկալի է, որ և այդ պակասաւոր կէտի վրա առանձին ուշադրութիւն դարձնէր և վերացնէր միջից շարունակ գանգատների առիթը՝ հարկ վճարելու վերաբերութեամբ։

—

Քաղաքային վարչութեան որոշմամբ քաղաքային կենտրոնական բուժարանի բժիշկ է նշանակված կին-բժիշկ տ. Մելիք-Եղիաթեանը։

—

Թիօնէթի գաւառապետի օգնական պ. Կարախանով նշանակվում է Թիֆլիսի նահանգի սարահարթերի գաւառապետի պաշտօնում։

—

«Веч. Гол.» թերթին Թիֆլիսից հեռագրում են. «Գեներալ Ալիխանովի խնդրանքի համաձայն հրաման է տրվել, որ բոլոր տեղական ուսանող նորակոչ զինուորները ծառայութեան ուղարկվեն Ռուսաստանի միջին նահանգները»։

—

Քաղաքիս 8-րդ մասի պրիստաւ Նաւասարդը նշանակված է Երևանի ոստիկանապետի պաշտօնում և մի քանի օրից յետոյ պիտի մեկնի իր պաշտօնատեղին։

—

Դատարանի դատավճիռը կարդալու ժամանակ լէյտենանտ Շմիդտը բռնեց կուրծքը և յուզված ասաց. «խնդրում եմ մի բան միայն, գնդակահարել ինձ»։ Ապա դիմելով դատարանի մէջ գտնված հասարակութեանը բացականչեց. «Յայտնեցէք Ռուսաստանին իմ միակ աղերսանքը»։ Նախագահը հրամայում է. «Ռօտմիստր վերականգնեցէք կարգը»։ Ամենքը գունատ են, պատի նման։ Դատապարտվածներին մտցնում պահապան խումբը։ Կոզակները շրջապատում են դատապարտուածներին։ Տրամադրութիւնը աննկարագրելի է։ Բալավինսկին վայր է ընկնում անզգայ և դուրս են տանում ձեռքերի վրայ։ Զարուբինն համբուրում է Շմիդտին։

—

«Нет. Лист.»-ի ասելով, Պետերբուրգում նոր ժամանակներումս կազմվելու է մի նոր միութիւն. «Ռուսաստանի բոլոր քաղաքացիների, առանց ազգի և կրօնի խտրութեան, բարօրութիւնը»։ Նրա հիմնական թէզիսները հետևեալներն են. Ռուսաստանը սահմանադրական միապետական պետութիւն է։ Բոլոր քաղաքացիները մի անբաժան Ռուսաստանի զաւակներն են և հաւասար են օրէնքի առաջ առանց որ և է սահմանափակումների։ Բոլոր դասակարգային արտօնութիւնները ոչնչացնվում են։ Ընտրութիւններին ձայնի իրաւունք ունին բոլոր չափահասները և գրագէտները։ Ընդհանուր և ձրի ուսում։ Դրամական միութիւնը պէտք է լինի քառորդական 100 մասի բաժանված։ Ամեն ջանք պէտք է ուղղված լինի միջին ունևոր դասակարգի ընդարձակման։ Էժանագին կրէդիտ։ Պրօգրէսսիվ եկամտային տուրքի գործադրութիւն և այլն։

—

Ընդհանուր գործերի դեպարտամենտը պահանջել է նահանգական վարչութիւնից տեղեկութիւններ մուսուլմանների այն դպրոցների մասին, որոնք չեն ենթարկվում ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը։

—

Լսում ենք, որ ճանապարհների հաղորդակցութեան մինիստր Նեմեշաևի հրաժարականը ընդունված է։ Այդ պաշտօնի համար թեկնածու են անուանում Շաուֆուսին։ «Р. В.»

—

Պետերբուրգի գերմանական գաղութի անդամները փետրվարի 19-ին նախընտրողական ժողով գումարեցին և ձայների առաւելութեամբ վճռեցին միանալ հոկտեմբերի 17-ի միութեանը։

—

«Н. Ж.» թերթը հաղորդում է մի հետաքրքիր մեթինգի մասին, որը տեղի է ունեցել Պետերբուրգի մանէժում անցեալ կիրակի օրը. միսիոնէր-վանահայր Արսէնը, որին սինոդը աքսորում էր Սօլովեցկի վանքը, խիստ կերպով դատափետեց սինոդին և Անտոնիոս միտրոպոլիտին։ «Ռուս ազգի միութեան» նախագահ Դուբրովինի ճառից, որը Վիտտէին օձ էր անուանում, էլէքտրականացած ամբոխը գոչում էր. «Հեռացնել Վիտտէին, մեղադրեալների նստարանի վրա նստեցնել Վիտտէին, Շլիսսելբուրգի ամրոցը ուղարկել, գոյքը գրաւել, խեղդել այդ օձին»։

—

«П. Г.» թերթը հեղինակաւոր աղբիւրից լսել է, որ Պետական Դումայի առաջին նստաշրջանը հաւանական է, չափազանց կարճատև լինի։ Ինչպէս յայտնի է Դումայի գումարումը լինելու է ապրիլի 27-ին, բայց հանդիսաւոր բացումը տեղի կունենայ մայիսի 14-ին, թագադրութեան օրը։ Գործունէութիւնը կը տևի 2 կամ 3 շաբաթ, այնպէս որ յունիսի սկզբներում կը վերջանայ Դումայի առաջի նստաշրջանը, իսկ յաջորդ նիստերը կը յետաձգվեն մինչև աշունը։

—

Բարձր իշխանութեան կարգադրութեամբ, երկաթուղիների բոլոր գրավաճառանոցներում և այլ հատավաճառների մօտ, փետրվարի 18-ից արգելված է գրաւած կոմս Լ. Ն. Տօլստոյի «Солдатская книга» բրօշիւրան։

—

«Нов. Вр.» թերթը հաղորդում է, որ Օդեսայի հրէական ջարդերի առիթով սենատոր Կուզմինսկու կատարած քննութիւնները բոլորովին անսպասելի հետևանքներ ունեցան։ Օդեսայի քաղաքապետ «Նեյդհարդտ»-ը հրէական ջարդ կազմակերպելու մեղադրանքի մէջ բոլորովին արդար է ճանաչվել, բայց մեղադրվում է նրա համար, որ Բարձրագոյն հրովարտակի յայտարարութեան հէնց առաջին օրը Օդեսայի ազգաբնակութեան հետ չը վարվեց Դուրասովի նման, որ «Ներօնի» դերը լաւ չը խաղաց։ Այդ արդէն ոչ թէ արդարութիւնը վերականգնել է նշանակում, այլ անարդարութիւնը պրօվօկացիան, խրախուսել. դա կը լինէր կառավարութեան համար անարժան կօմեդիա։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Փետրվարի 26-ին, երեկոյեան ժամը 10-ին Դեսիմոնովսկի հրապարակի մօտ, իր բնակարանում որդին վիճաբանութեան ժամանակ վիրաւորեց իր հօրը, Պետր Շիրեաևին։ Շիրեաևը հիւանդանոց տանելու ժամանակ ճանապարհին վախճանվել է։ Սպանողը փախաւ, բայց ձեռք առնված միջոցներով ձերբակալված է և ենթարկված է դատի։

—

Փետրվարի 25-ին Նախալովկայում վիրաւորված երկաթուղու ծառայող Իվան Լիձակովսկին վախճանվեց։

—

Փետրվարի 27-ին առաւօտեան, իր բնակարանում (սուրբ Նշանի և Ոսկերչների փող. անկիւն տուն Մասալիգովի) գտնված է գանձակցի Կոնստանտին Երեմեանի դիակը, սրով 20 տեղից վիրաւորած։ Ինչպէս երևում է, նրա սպանողները եղել են մի քանի մարդիկ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՒԳԵՆԻ ՐԻԽՏԵՐ

Հեռագիրը գուժեց գերմանական նշանաւոր քաղաքական գործիչ Եւգենի Րիխտէրի մահը։

Րիխտէր ծնվեց 1838 թւին, ուսումնասիրեց իրաւաբանութիւնը, պետական ծառայութեան մէջ էր գտնվում Դիւսսելդորֆում։ 1864 թւին նա Նէյվիդ քաղաքի (Հռենոսի գաւառ) բուրգոմիստր ընտրվեց, բայց կառավարութիւնը չը հաստատեց նրան և իր կամքի հակառակ պաշտօնով փոխադրվեց Բրոմբերգ։ Այդ բանից վիրաւորված, Րիխտէր հրաժարական տուեց ծառայութիւնից և բնակութիւն հաստատեց Բեռլինում։

Րիխտէր 1867 թւին սահմանադիր ռէյխստագի անդամ էր. 1871 թւից մինչև ներկայ ժամանակը գերմանական ռէյխստագի պատգամաւոր էր նախ Շվարցբուրգ—Ռուդոլշտադից, ապա Հագէնից (Վեստֆալիայում), 1867 թւից պրուսական լանդտագի պատգամաւոր էր երբեմն Հագէնից, երբեմն էլ Բեռլինից։ Թէ ռէյխստագում և թէ լանդտագում նա պատկանում էր պրօգրէսիստ կուսակցութեանը, ուր նա մի անդամից աչքի ընկնող, իսկ յետոյ առաջնակարգ դերը գրաւեց։ Այդ բանին նպաստում էին նրա հաղուագիւտ, թէպէտև մի փոքր արուեստական պերճախօսութիւնը, որի մէջ նրա հետ հաւասարվել կարող է ռէյխստագում միայն Բէբէլը, նոյնպէս և նրա զարմանալի հնարագիտութիւնը և սրամտութիւնը, մեծ և բազմակողմանի հմտութիւնները, մանաւանդ ֆինանսների և զինուորական շրջանում։

Սկզբից և եթ նա կատաղի կռիւ էր մղում Բիսմարկի դէմ, որի պատճառով և նա Բիսմարկի ծայրայեղ ատելութեան առարկայ էր։ Նա միշտ դիմադրում էր պետական գործունէութեան շրջանի ընդլայնման, օրինակ երկաթուղիների պետական սեփականութիւն դառնալուն, յամառ կռիւ էր մղում թէ արդիւնաբերական և թէ ագրարային պրոտէկցիոնիզմի դէմ, պաշտպանում էր արդիւնաբերութեան լիակատար ազատութիւնը, բողոքում էր բոլոր սկզբնաւորութիւնների դէմ սօցիալական քաղաքականութեան շրջանում։ Նա սիստեմատիկ կռիւ էր մղում զօրքը և նաւատորմը մեծացնելու կառավարչական բոլոր նախագծերի դէմ. դրանց դէմ նրա ճառերը, որոնք միշտ լիքն էին թւերով և ճիշտ փաստերով, պատկանում են նրա լաւագոյն ճառերին և գրաւում էին թէ իր կուսակիցների և թէ հակառակորդների ընդհանուր ուշադրութիւնը։ Նա կռիւ էր մղում նոյնպէս գերմանական կայսրութեան գաղթականական քաղաքականութեան դէմ։

Միւս կողմից նա սօցիալիզմի կատաղի հակառակորդ էր. միշտ մեծ յօժարութեամբ, թէ պարլամենտում և թէ նրանից դուրս, հանդէս էր գալիս նրա դէմ, բայց միև նոյն ժամանակ կտրական հակառակորդ էր ոստիկանական եղանակներին սօցիալիզմի դէմ. 1878 թւի սօցիալիստական օրէնքը յանձին նրա միշտ կատաղի տաղանդաւոր հակառակորդ ունէր։

Րիխտէր 1882 թւից մինչև 1891 թիւը խմբագրում էր «Der Reichsfreund» քաղաքական շաբաթաթերթը. 1885 թւին նա հիմնեց «Freisinnige Zeitung» ամենօրեայ լրագիրը, որի մէջ եռանդուն մասնակցութիւն ունէր մինչև այժմ։ Չը նայելով նրա եռանդուն գործունէութեանը ռէյխստագում և լանդտագում, նրա անհատական մասնակցութիւնը քաղաքական ագիտացիայում պարլամենտից դուրս և աշխատակցութիւնը լրագրում, Րիխտէրը կարողացել է գրել և բաւական ինքնուրոյն գրուածքներ։

ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԸ ԵՒ ՌՈՒԶՎԵԼՏԸ

Սօֆիայի «День» թերթը հրատարակել է այն հեռագիրը, որը Բուլղարիայի Ռուշչուկ քաղաքի հայերը ուղարկել են Հիւսիսային-Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահ Ռուզվելտին, հետևեալ բովանդակութեամբ.

Նախագահ Ռուզվելտին
Վաշինգտոն։

Ռուշչուկ քաղաքի երեք հազար հայերը մեծ ոգևորութեամբ միանում են այն յիշատակագրին, որը ուղարկել են ձեզ բարեսիրտ եւրոպացիները դժբախտ, արիւնաքամ Հայաստանի մասին։

Ազատելով այդ դժբախտ երկիրը, որին ստրկացնողները զրկում են ամենատարրական իրաւունքներից, Ամենաբարձրեալի օրհնութիւնը կը հրաւիրէք այն մեծ ազգի վրայ, որի պարագլուխն էք ընտրվել դուք, և յաւերժ յիշատակ ու խորին երախտիք կը թողնէք տառապող հայերի սրտերի մէջ։

Հայ գաղութի նախագահ
Առաջնորդական փոխանորդ՝ Բօյաջեան։

ԵՒՐՈՊԱՆ ԵՒ ՌՈՒՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

Փողի կարիքը միշտ զգաստեցուցիչ գործօն է եղել կայսրների, պարլամենտների և մինիստրների կաբինետների համար։
Ջօն Մօրլէյ. «Օլիվեր Կրոմվելի նոր կենսագրութիւն»։

...Ֆինանսական նոր մինիստրի ամենաերկարատև զեկուցումը, որ կցվում է տարեկան բիւջէին՝ այս տարի չը գրաւեց մամուլի առանձին ուշադրութիւնը։ Նոյն իսկ ֆինանսական հարցերին լաւ տեղեակ «Рус. Вѣд.» լրագիրը սովորական մանրագնին անալիզի տեղ բաւականացաւ այս անգամ «թեթև հեծելազօրական արշաւանքներով»... Լուրջ ամսագրերը «Рус. Бог.», «Вѣст. Евр.» անգամ նրան չը յիշատակեցին։ Բայց այդ զեկուցումը արժանի էր ամենախորին վերլուծման. կրկին և կրկին ապացոյց բիւրօկրատիայի անշնորհքութեան, նրա նոյն իսկ կաբինետային աշխատանքի անպատշաճութեան։ Սուբեկտիվիզմը այս տեսակ հարցերում դրված է նեղ սահմանների մէջ և մենք, օրինակ, ոչինչ չունենք պ. մինիստրի վերջաբանական խօսքերի դէմ. Էհ, վաղուց է բանաստեղծը ասել. «Իրանի հաւատացողին, նա տաքուկ է ապրում»։ Բայց օբեկտիվ դրութիւնները պիտի պատճառաբանված, համոզիչ լինեն։ Նոյն իսկ Պետական Խորհուրդը իր յիշատակարից մէկում պարտաւորեցրել էր ֆինանսական մինիստրին—այն ժամանակ քուրմ և հրաշագործ պ. Ս. Վիտտէին, որ թւերը պատճառաբանված ներկայացնէ խորհրդին, թէև բարձր հաստատութեան այս ցանկութիւնը միշտ մնացել է pium desiderium. Շատ ապացուցած մեղքեր ունի բիւրօկրատիան և յատկապէս բիւջէ կազմելու հարցում, բայց այս անգամ դա չէ մեր ասելիքը։ Անցնենք։

Ի՞նչ է հիմքը այս տարվայ բիւջէի. պ. մինիստրը սպասելիք հասոյթը հաշւում է 1904 թւականի իսկական եկամուտի չափ։ Ո՞ր աստիճան այդ սպասելիքը օրինաւոր է, ո՞ր են փաստերը, որով պ. մինիստրը եկել է այդ եզրակացութեան. նրանք բացակայում են։ Եւ մեզ է թողնված քննել այն հիմնաքարը, որի վրա ծանրանում է հսկայ երկու միլլիարդական բիւջէն...։

1903 թւականը Ռուսաստանի համար ընդհանրապէս բարեյաջող էր. չը կար սով, ներքին ու արտաքին պատերազմ։ Եւ դա պիտի ազդէր 1904 թւի եկամուտի վրայ։ Ճիշտ է, 1904 թւի հէնց շէմքին մենք պատերազմ մըտանք, բայց հաւատացած, որ եապօնացիներին մենք ջարդ ու փշուր կանենք չնչին ուժերով հէնց որ նրանք ցամաք իջնեն, նոյն իսկ Նալուի ափերին, մենք երկրից շատ զինուոր չը հանեցինք այդ տարին։ Երկրորդ՝ պատերազմը, որպէս և ամեն խոշոր տնտեսական երևոյթ, իր հետևանքներն իսկոյն չէ երևան հանում, հարկաւոր է ժամանակ։ Այժմ՝ ինչ ասողի, ինչ նշանի տակ մտանք 1906 թւին։ Ճիշտ է, մեծածախս պատերազմ չը կար, բայց չէր ցամաքել պ. մինիստրի զեկուցման թանաքը, երբ ծովակալ Դուբասով ռմբակոծում էր Մօսկվան։ (Ի դէպ՝ երբ եապօնացիները ռմբակոծում էին Վլադիվօստոկը, «ազգասէր» մամուլը ճիշտ հաշուել էր թէ ինչ արժէ ամեն մի ապարդիւն եապօնական ռումբի պայթումը. այդ տեսակ հաշիւներ այժմս չեմ գտնում նրանց սև էջերում)։ Հա, Մօսկվան ռմբակոծած, Կովկասը և Սիբիրը ապստամբ այն աստիճան, որ Պետերբուրգը ամիսներով տեղեկութիւն չունի, Բալտեան նահանգները խիստ վտանգի մէջ, գեներալ և ֆլիգել-ադիւտանտներ գլուխ կորցրած թըռչում են այս կամ այն նահանգ՝ գիւղացիների «խռովութիւնները» ճնշելու և ի լրումն ամենի՝ սարսափելի սով, որ ըստ պետական հաշւի բռնել է մի շրջան 23 միլլիոն ազգաբնակութեամբ։ Աւելի հեղինակաւոր աղբիւրներ հաշւում են մօտ 50 միլլիոն ժողովուրդ սովի մատնված։ Մենք զանց ենք առնում պ. մինիստրին մեզնից լաւ յայտնի ռուս կապիտալի արտասահման չուելը, որ անշուշտ պիտի ունենայ իր հետևանքները։

Նմանութիւն կա՞յ 1904 և 1906 տարեմուտքերի մէջ, որ սպասենք նման արդիւնքներ։

Կայ մի խոշոր գործօն, որ դիտմամբ մինչև այժմս չը յիշատակեցինք. դա ազգաբնակութեան աճումն է։ Իրօք, Ռուսաստանի ազգաբնակութիւնը այժմս ամեն տարի աւելանում է երկու միլլիոն հոգով. իսկ ժամանակակից քաղաքացու ամեն մի քայլը տուրք է բերում գանձարանին։ Երկրորդ՝ 1905 թւականին և այս յունվարին կառավարութիւնը բարձրացրեց շատ հարկեր, մաքսահարկեր, ակցիզներ, երբեմն կրկնակի՝ 1904 թ. գոյութիւն ունեցածին հետևաբար, հաւասար սպառման պայմանով 1906 թւին սպասելիք տուրքերը պիտի աւելի լինեն 1904-ից. այսինքն պ. մինիստրի հաշիւը ըստ երևոյթին զգոյշ է։ Քիչ կանգ առնենք այս կէտի վրայ։

Պատերազմը մեզանից խլել է, ոչ պակաս քան 235,000 հոգի, ծաղիկ հասակի մէջ. հեռու Արևելքում մենք ունենք պահած մօտ ½ միլլիոն զօրք, պահեստի զինուորները շատ տեղերում դեռ չեն արձակված, ընդհակառակը տեղի ունեցան նոր мобилизаціи (կոզակների օրինակ)։ «Ներքին» պատերազմը քիչ չափով զոհեր չէ կլանում, սաստկացել է հրէական գաղթականութիւնը դէպի ապահով երկրները, նոյնպէս փախուստ է տալիս խոշոր буржуазія։ Երկրի դրութիւնը նկատի առած՝ պիտի նախատեսել և հաշւի չառած ծախքեր, տուրքերի պակասում։ Չէ՞ որ տուրքերի բարձրացումը, երբ վեր է ժողովրդի ոյժից՝ նշանակում է սպառման նուազում։ Ո՞ր չափով անուղղակի տուրքերը (косвенные налоги) կենթարկվեն այս անողոք օրէնքին, մեր հարցին պատասխան չը կայ. ի նկատի ունեցէք և սովի ժամանակ մահաբերութեան բարձրանալը, որ լաւ ապացուցված է 1892 թւի սովից յետոյ։ Վերջապէս թող վերջին երկու բարեյաջող գործօնները գերակշռեն 47 միլլիոն յետ գնման հարկերը (выкупные платежи), որ համաձայն նոյեմբերի 3-ի մանիֆեստի այլ ևս չեն մտնի, նման 1904 թւին, պետական գանձարանը։ Այո, մարգարէ չը պէտք է լինել, որ բիւջէի գլխաւոր առանցքը՝ սպասելիք եկամուտը ուռցրած թիւ է, առանցքը կէս ճանապարհին, բեղագուրկ, պիտի կոտրվի։

Եւ ահա այստեղ է ռուս ժողովրդի փրկութիւնը։ Ո՛չ սրի ծայրով ձեռք կը բերես քո փրկութիւնը, խեղճ ռուս հպատակ, այլ քո տնտեսական քայքայման գնով: Արդարանում է բանաստեղծի ասածը՝ «Ռուսաստանը եւրոպական արշինով չես չափի». Ինչ որ այնտեղ սպասում են օրգանիզացիայից, մենք սպասում ենք դեզօրգանիզացիայից: Ո՛չ կազմակերպութիւն, այլ քայքայում. դառն ճշմարտութիւն:

Ինչպէս ենք մենք ապրել մանաւանդ 1881 թւից յետոյ, երբ ֆինանսների կարևոր ղեկը հազիւ Ն. Բունգէից անցաւ ուրիշների ձեռքը: Բնակիչներից կորզելով նրանց ույժից վեր, սա մէկ. երկրորդ՝ արտասահմանեան պարտքերով՝ փոխառութիւններով: Մէկ ճարտարախօս մինիստր՝ անշուշտ իսկոյն յիշեցիք նրա անունը—ամենահպատակօրէն հաւատացնում էր՝ չը պիտի տրտնջալ մի քիչ բարձր հարկերից. պետութիւնը նրանց հաւաքում է սև օրերի համար, այդ օրերը հեշտ կանցնեն ժողովրդի համար. դա մի տեսակ ապահովացումն է: «Աւա՛ղ, սև կամ արևածծաղ օրերին նոր և նոր շալակներ էին բարձում մեր նուաղ ուսերին. նոր և նոր փոխառութիւններ առձեռն ոսկին («золотая наличность») դրսեւելու համար: Եւ սա հասցրեց մեզ ծայրահեղ աղքատութեան, մուրացկանութեան: «Մենք գիտենք, որ տնտեսական քայքայումը նորից չէ սկսվել: Մենք գիտենք բիւրոկրատիայի և նրա սիրածների ֆինանսական սիստեմի գինը: Բայց գլխաւորը այն է, որ այդ գինը իմացան և մեր պարտատէրերը». (Полярная Звѣзда № 5, եր. 322, յօդուած պ. Վլ. Նաբոկովի): Պարտատէրը իմացաւ, մեզ ճանաչեց և փոխեց իր քաղաքականութիւնը:

Ահա ինչպէս էր բնորոշում իտալացի գիտնականը այս հոգեբանութիւնը. Շատ անգամ փող պարտք տուողը (անշուշտ պետութիւնների մասին է խօսքը) չի էլ իմանում ինչ նպատակի պիտի ծառայեն իր փողերը, և 10 դէպքերից, 9-ում նա չի էլ հետաքրքրվում իմանալու: Ես յաճախ պատահել եմ աստուածավախ քրիստոնեաների, որոնք ունեցել են տաճկական կամ եգիպտական պետական արժէթղթեր: Յայտնի է որ անգլիացիներից շատերը Հնդկաստանում կուռքերի առևտուրով են պարապում, հետևաբար կռապաշտութեան արմատանալուն նպաստում, բայց իրանք, մնված անգլիական եկեղեցու ոգով, պարտաւոր են համարում իրանց համար, սեփական հաշւով, նոյն Հնդկաստան քարոզիչներ, միսիոնարներ ուղարկել՝ կռապաշտութեան դէմ կռուելու: Նոյնը և պետական փոխառութիւնների առիթով: Ես ծանօթ էի մի շատ և շատ անկեղծ հաւատացողի հետ. նա rentier էր (տոկոսով ապրող ապահով ոմն), որ այն ժամանակ, երբ ամենազզուելի և զարշելի միջոցներով թրքական թղթերը բարձր կուրսերի վրա էին պահվում, իր դրամագլխի խոշոր մասը վերածել էր թրքական թղթերի: Այդ հանգամանքը նրան բնական էր թւում: Եւ երբ ես նրան բացատրեցի, որ նրա փողերը գուցէ ծառայել են իբր վարձատրութիւն աւազակային այն խմբերի, որ կոտորում են տաճկահայերին, իսկ նրա թղթերից ստացած տոկոսները գոյանում են կոպէկ կոպէկ խլած Փոքր-Ասիայի քրիստոնեաներից՝ նա ինձ վրա նայում էր՝ կարծես ես զառանցանքի մէջ եմ. այդ տեսակ բաներ երբէք նրա մտքին չեն եկել: (Основ. начала финансовой науки, եր. 523 *):

Այդ անգէտ, անմեղ rentier-ն, որին սովորեցնում էր պատկառելի պրոֆ. Նիտտէն, այժմ լաւ հասկացել է իրան սպառնացող վտանգը. միայնակ պ. Նիտտէն չէ, այլ ամբողջ եւրոպական մամուլն է այժմ նրա ուսուցիչը: «Н. Ж.»-ը նորերս հաղորդեց ռուս բիւրոկրատիայի «աչքեր անող» Figaro-ն անգամ փոխվել է, իսկ անկաշառ մամուլը նորից և նորից լուսաբանում է այն վտանգը, որ սպառնում է փոխ տուած եւրոպական միլիարդներին և դրական կերպով մերժում նոր փոխառութիւններ՝ մինչ ղեկը չանցնի ժողովրդի իսկական ներկայացուցիչների ձեռքը: Եւ այս անգամ խարդախութիւնները չեն ազդի: Միայն իսկական ներկայացուցչութիւնը, իսկական Դուման կը կենդանացնեն պետական ֆինանսները, պետութեան այդ մեր ժամանակվայ գլխաւոր Ներվը, որով նա կենդան է. ինչպէս չը յիշել յօդուածիս դրած էպիգրաֆը, և՛ գրող և՛ քաղաքագէտ «ազնիւ Ջոնի» ասածը:

Եւ այս հզօր գործօնի դէմ որքա՜ն չնչին խաղալիքներ են կամարիլիայի կամ օտար գուող իշխանների խորհուրդները՝ ժողովրդի սանձը ձեռքին պահել, խորհուրդներ, որ թէկուզ դուրս գան նորագոյն Զիգֆրիդների բերանից, «հայրենազուրկ տղերանց» այդ անհաշտ թշնամուց: Միայն կարճատես, կոյրը կարող է համեմատութիւն տեսնել 1881 թւի և 1096 թւի Ռուսաստանի մէջ (տես Засѣданіе Государств. Совѣта 8 марта 1881 г., «Былое» № 1):

Պ. Զաքարեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անգլիա: «Fanrkfurter Eeitung» թերթը հաղորդում է, որ Էդուարդ թագաւորի Եւրոպական ցամաք գնալը քաղաքական կարևոր նշանակութիւն ունի:

Թագաւորը նախ ուզում էր ծպտեալ կերպով ուղղակի Բիարից գնալ, բայց անցեալ շաբաթ փոխեց իր այդ մտադրութիւնը և յայտնեց Պարիզ, որ ցանկանում է անձամբ ողջունել հասարակապետութեան նախագահ Ֆալիէրին: Ելիսեան պալատից պատասխան ստացվեց, որ հանրապետութեան նախագահը, որովհետև չէ ուզում ընդհատել թագաւորի ճանապարհորդութիւնը, ուստի պատրաստ է դիմաւորելու նրան երկաթուղու կայարաններից մէկում և նրան ուղեկցելու ճանապարհի մի մասը: Բայց թագաւորը մերժեց այդ առաջարկութիւնը և ցանկացաւ գալ Պարիզ և այցելութիւն տալ Ֆալիէրին: Այդ փաստը բարձրացնում է բրիտանական վեհապետի ճանապարհորդութեան քաղաքական նշանակութիւնը: Պաշտօնական շրջաններում ընդունում են, որ թագաւորը Պարիզում կօգտվի իր ներկայութիւնից Մարոկկոյի հարցի մասին բանակցելու և ընդհանուր քաղաքականութեան վրա ազդելու համար:

Ֆրանսիա: Փետրվարի 18-ին, Բիշար, Կուլէ, Լարուրէ և Լէկօ կարդինալները հաւաքվեցին Պարիզում մշակելու ֆրանսիական եպիսկոպոսների համագումարի ծրագիրը, որ կայանալու է փետրվարի 27-ին: Համագումարի նպատակն է քննել դաւանական ընկերակցութիւններ կազմակերպելու հարցը, որոնց ձեռքը պէտք է անցնէ կրօնական գործերի կառավարութիւնը եկեղեցին պետութիւնից բաժանելու օրէնքը գործադրութեան մէջ մտնելուց յետոյ: Որովհետև յիշեալ ընկերակցութիւնները եկեղեցական բարեփոխութեան էութիւնն են կազմում, ուստի թերթերը արդարացի կերպով նկատում են, որ Պապի մերժումը ճանաչել նոր կարգերը՝ մնում են մեռած տառ: Պատգամաւորների ժողովը և սենատը վաւերացրին, որ պօստային նամականիշների գները ներքին թղթակցութիւնների իջեցվեն 15-ից 10 սանտիմի: Նոր օրէնքը ույժ կը ստանայ ապրիլի սկզբներից:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

23 փետրվարի

ՊԱՐԻԶ, 24 փետրվարի: Նախագահ Ֆալիէրը առաջարկեց Սարիէնին կաբինէտ կազմել (Հավաս):

ՄԻՆՍԿ, 24 փետրվարի: Երէկվանից սկսուած ջրհեղեղը մեծ չափեր է ընդունում: Ջրասոյզ եղած փողոցների թիւը տասից անցնում է: Ջուրը բարձրացաւ երկու սաժէնի չափ, տարաւ կամուրջը և լցվել է ներքին յարկի բնակարաններում և նկուղներում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 փետրվարի: Սինօդի որոշմամբ մարտի 5-ին Պետերբուրգ են հրաւիրվելու առանձին ատեանների անդամներ համառուսական եկեղեցական համագումարի քննութեան ենթարկվելի մի քանի հարցեր մշակելու համար:

ՎԻԵՆՆԱ, 24 փետրվարի: (Բիւրօի Թղթ.) Պատգամաւորների պալատում ընտրողական ռէֆորմի նախագծի քննութեան ժամանակ, Սելվա Ցօրսկան ասաց, թէ ընտրողական իրաւունքը անարդար կը համարվի, եթէ հիմնված չի լինի ընդհանուրի շահերը երաշխաւորելու սկզբունքի վրա: Բոլոր կուսակցութիւնները ընտրողական ռէֆորմից հարկադրված պէտք է ջանան ազգային միութիւն հաստատելու: Անհրաժեշտ է տարածել ռէյխսռատգի իրաւասութիւնը արտաքին քաղաքականութեան և զինուորական-ծովային հարցերի վրա: Ադլէրը յայտնում է, որ սօցիալ-դէմօկրատները ողջունում են այդ նախագիծը, անտես առնելով վերջինիս պակասաւոր լինելը, ընդունելով որ նա ներկայացնում է, որպէս առաջին քայլը՝ պրոլետարիատին իրաւունքներ տալու և կազմելու իսկական ժողովրդական պարլամենտ: Սօցիալ-դէմօկրատները կընդդիմադրեն նստակեցութեան օրէնքին և գաղտնի ձայնտուութեան: Շտերնբէրգն ասում է, որ ընտրողական ռէֆորմը յօրինված է սօցիալ-դէմօկրատների և երիտասարդ չեխերի շահերին հակառակ և խիստ կերպով յարձակվում է կառավարութեան վրա: Օնցիւլը պնդում է թէ միակ արդար ռէֆորմն այն կը լինի, որ կաշխատվի վերականգնել սլաւօն և ոչ սլաւօն պատգամաւորների իրաւունքների հաւասարութիւնը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի: Պաշտօնական: Մինիստրների խորհրդի փետրվարի 24-ի նիստը զբաղվեց վերջնականապէս խմբագրելու այն յօդուածները, որոնք վերաբերում են տեղական հողային յանձնաժողովներ հիմնելու հարցին: Մշակած նախագիծը մօտիկ ապագայում կը ներկայացնվի կայսրի ամենառողորմած հայեցողութեան խորհրդի ինչպէս յօգուտ նախագծի այնպէս և մտադրած միջոցների իրականացման դէմ յառած կարծիքների հետ միասին: Նոյն նիստին զեկուցվեցին նաև մի քանի հրէական ընկերութիւնների ներկայացուցիչների գրութիւնները, որ երկիւղ էին յայտնում թէ միջոց է հրէաների դէմ նոր հալածանք է սկսվելու, ընդարձակ չափերով բռնութիւններ գործադրելով: Այդ առթիւ ներքին գործերի մինիստրը յայտնեց թէ վերոյիշեալ երկիւղները հազիւ թէ հաստատ հիմք ունենան, և որ կառավարութիւնը արդէն ձեռք է առել համապատասխան միջոցներ նման երևոյթների առաջն առնելու համար: Ապա խորհուրդը զբաղվեց Դումայի ընտրութիւնների և մի քանի ուրիշ մասնաւոր հարցերի քննութեամբ:

ՊԱՐԻԶ, 25 փետրվարի: Բուրժուան և Պուանկարէն սկզբունքով որոշեցին մտնել Սարիէնի կաբինէտի կազմի մէջ: Եթէ Սալիէնին աջողվի մինիստրութիւն կազմել, նա աւելի արմատական կը լինի, քան Ռուվիէն: Պարլամենտական այն շրջանները, որոնց պատկանում են մինիստրութեան թեկնածուները, պահանջում են լիակատար և շուտափոյթ կերպով փոխել եկեղեցին պետութիւնից բաժանելու օրէնքը: Աւելի չափաւոր կուսակցութիւնները երկիւղ են յայտնում, թէ մի գուցէ այդպիսի քաղաքականութիւնը առիթ տայ անկարգութիւնների և յուզմունքների առաջանալուն:

ԲԵՐԼԻՆ, 24 փետրվարի. (Վօլֆ) Վախճանվեց ռէյխստագի յայտնի պատգամաւոր Րիխտէրը:

ՎԻԵՆՆԱ, 25 փետրվարի: Գեկան հրաժարական տւեց:

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ, 25 փետրվարի: Օչակովից վերադարձաւ Շմիդի գործի համար մեկնած դատաստանական կազմը: Մեղադրեալները մնացել են Օչակովում «Պրուդ» նաւում. վճռաբեկ գանգատի ժամանակամիջոցը լրանում է փետրվարի 28-ին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի: Речь-լրագրում տպված էր մի առաջնորդող, որ յայտնում էր ի միջի այլոց այն՝ թէ սահմանադիր-ռամկավարական կուսակցութեան դէմ յարուցած հալածանքները բղխում են ոչ թէ ներքին գործերի մինիստրից, այլ առաջին մինիստրից: Այդ առթիւ «Русск. Госуд.» լրագիրն ասում է, որ հնարաւորութիւն ունի հաստատելու, թէ կոմս Վիտտէն վերոյիշեալ կուսակցութեան վերաբերեալ վճռական ոչինչ չէ առել ոչ ոքի, բացի ստիպողաբար արված մի շարք ցուցմունքներից այն մասին, թէ ոչ մի քաղաքական արտօնեալ կուսակցութեան դէմ ոչ մի արգելք չը ստեղծվի, և որ այդպիսի կուսակցութիւնները չենթարկվեն որ և է հալածանքի, օրէնքով որոշած սահմանների մէջ նրանց կատարած գործունէութեան համար: Այն դէպքում երբ շրջանային լիազօրների ընտրութիւնները անհնարին լինեն կատարել, մասնակցողների մի որ և է խմբի կողմից արած հակառակութեան պատճառով, ինչպէս այդ տեղի ունեցաւ երկու դէպքում, այն ժամանակ հնարաւորութիւն կը տրվի երկրորդ անգամ գումարել շրջանային ժողովներ ընտրութիւններ կատարելու համար.

ՄԻՆՍԿ, 25 փետրվարի: Ջուրը իջաւ: Ամենից շատ տուժեցին 5 փողոց: Ներքին շուկայում ջուրը թրջել է բոլոր ապրանքները: Վնասները ահագին են: Ջրանցքի մեքենան և էլէքտրական կայարանը ջրասոյզ են եղած: Քաղաքը մնացել է առանց ջրի և լոյսի:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի: Առևտրական հաստատութիւնների, պահեստների, գրասենեակների և արհեստագիտական հաստատութիւնների ծառայողների սովորական հանգիստը ապահովելու հարցը քննվելու է մարտի 3-ին Պետական Խորհրդի վարչութիւնների միացեալ ժողովում:

ՊԱՐԻԶ, 25 փետրվարի: Սարիէնը ընդունեց նախագահի առաջարկութիւնը, կաբինէտ կազմել:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: 25 փետրվարի: Լրացնելով փետրվարի 20-ի հեռագիրը՝ Կովկասի Փոխարքայի դիւանատան կից առանձին յանձնարարութիւնների 6 պաշտօնեաներ նշանակելու մասին, յայտնում ենք, որ այդ պաշտօնեաներին ռոճիկ չէ յատկացվում:

27 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի: Անբերրիութիւնից տուժած ազգաբնակութեան նպաստամատոյց յանձնաժողովը մինչև փետրվարի 25-ը նպաստ է տուել Թագաւորական պաշարեղէնի համար յատկացրած ընդհանուր դրամագլխից 64,172,541 ր. 57½ կոպ., որից ամենից շատ տրված է Սարատովի, Տուլսկի, Ռեազանի և Տամբովի նահանգներին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 25 փետրվարի: Ապստամբութեան գրգռիչ յօդուածներ տպագրելու համար Գիլրեյնշտէյնը դատապարտված է 1 տարվայ բանտարկութեան, խմբագրելու պաշտօնից զրկվելով 5 տարի շարունակ, իսկ «Нашъ Голосъ» լրագրի խմբագիր Սալտիկովը արդար է ճանաչված: «Начало» և «Нашъ Го..» լրագրները դադարեցրած են ընդմիշտ: Ճանապարհների հաղորդակցութեան մինիստրը յանձնարարեց երկաթուղիների ընդհանուր ատեաններին և առանձին խորհուրդներին մի քանի մասնաւոր հարցեր, որ վերաբերում են անկարգութիւնների ժամանակ արձակած ծառայողների ընդունելութեան մասին, բացի դրանից մտցրեց Մինիստրների Խորհուրդը մի նախագիծ՝ երկաթուղային ծառայողների կանոնների, կարգապահութեան և ծառայութեան ժամանակամիջոցի ու հանգստի մասին: Բանւորական ժամանակի չափը բաւականին իջեցրած է, համեմատած գոյութիւն ունեցող մինչև այժմ ժամանակի հետ:

ՊԱՐԻԶ, 26 փետրվարի (Հավաս): Սարիէնը շարունակում է բանակցութիւններ վարել քաղաքական գործիչների հետ, կաբինէտ կազմելու վերաբերմամբ. նրան աջողվել է առնել սօցիալիստ Բրիանի, Բուրժուա և Րիօ արմատականների, Պուանկարէ և Լօյգ ազատամիտների համաձայնութիւնները: Սարիէնը յոյս դրած ունի և Կլէմանսօի և Տօմսօնի աջակցութիւնների վրա:

ԿՈՎՆԱ, 26 փետրվարի: Կազմակերպվում է լիտովցիների ազգային դէմօկրատ կուսակցութեան:

ՎԼԱԴԻԿԱՎԿԱԶ, 26 փետրվարի: Զինուորանահանգական դատարանը 1905 թ. նոյեմբերի անկարգութիւններին մասնակցող Ապշէրոնսկի գնդի 4 զինուորի դատապարտեց 12-ամեայ աքսորի, 10 հոգու՝ պատժական մասում բանտարկութեան:

ՀՌՈՄ, 26 փետրվարի: Պատգամաւորների պալատի նախագահ ընտրված է Բիանկէրին՝ 255 ձայնով, ընդդէմ 77-ի:

ԲԵՐՆ, 26 փետրվարի: Ի նկատի ունենալով, որ անցեալ տարի համաձայնութիւն կայացաւ մեծ պետութիւնների մէջ՝ Ժընէվի կոնվենցիայի ստորագրելու վերաբերմամբ, Դաշնակցական խորհուրդը առաջարկեց մեծ պետութիւններին ուղարկել իրանց պատուիրակներին մայիսի 20-ին կայանալիք կօնվերենցիան վերաքննելու համար:

ԲԵՐԼԻՆ, 26 փետրվարի: Սարսափելի մրրիկ անցաւ Գերմանիայի վրայով, առաւելապէս հարաւային մասով: Մի քանի տեղ կտրված են հեռագրաթելերը:

ԱՐԺԷՍԻՐԱԶ, 36 փետրվարի: Կոնֆերէնցիան ժողովի հարցերը—պետական բանկ հիմնելու և ոստիկանութիւն հաստատելու մասին, տրված են խմբագրական յանձնաժողովին՝ վերջնականապէս վճռելու համար: Բանակցութիւնները խաղաղ բնաւորութիւն էին կրում: Յոյս կայ համաձայնութեան գալու:

ՍԵՎԱՍՏՈՊՈԼ, 26 փետրվարի: Հոկտ. 17-ի մանիֆէստի կուսակցութեան իրաւունք է տրված նախընտրական ժողովներ անել, իսկ սահմանադիր-ռամկավարականին մերժված է:

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 26 փետրվարի: Պետական գանձարանի հաշւից երևում է, որ 1905 թ. մուտքը հակառակ 1904 թւի պակաս է 160,000,000 կրօնով, ծախսերը քչացել են 42,700,000 կրօնով: Մուտքի քչութիւնը հետևանք է այն ուղղակի հարկերի չը վճարման, որոնց պատգամաւորների պալատը չէ քուէարկել:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 26 փետրվարի (Րէյտէր): Պետական վարչութեան տեղեկութիւնների համաձայն, Մանջուրիայի առևտրի պայմանները աւելի և աւելի բարւական են դառնում: Ճապօնական զօրքերը վերջնականապէս կը մաքրեն Մանջուրիան, հէնց որ երկիրը կը բացվի համաշխարհային առևտրի համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 փետրվարի: Ազատամիտ կուսակցութեան փետրվարի 26-ին նշանակած նիստը յետաձգված է քաղաքապետի հրամանով:

ՄՕՍԿՎԱ, 26 փետրվարի: Քաղաքում և նահանգում կայացան բանւորների լիազօրների ընտրութիւնները ընդհանրապէս առանց միջնադէպքերի, թէև բանւորների մի մասը խուսափում էր ընտրութիւններից: Ընտրութիւնները դեռ չեն վերջացել: Քաղաքապետը պատուիրել է չը խանգարել միւս օրը կայանալի բանւորների յետագայ ընտրութիւնները:

ԲԵՐԼԻՆ, 23 փետրվարի: «Կէլնիշէյցէյթունգ» լրագիրը մեկնաբանում է «Թայմսի» այն լուրը, որ գերմանական կայսրի զիջողութիւնը մարոկկեան հարցում եղել է կայսրի բարձր ազգականներից մէկի նամակի ազդեցութեամբ, և յայտնում է թէ՝ կողմնակի ազդեցութիւնը հարկաւոր չէր, քանի որ կայսրը հէնց սկզբից յարված էր այնպիսի համաձայնութեան, որ երաշխաւորէ Գերմանիայի շահերը միւս ընդհանուր շահերի հետ համահաւասար կերպով:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Յ. Մ. ՋԻՋՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի. ներքին և [illegible]
Մ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳՋԵԼԻՆՕՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. Գ. ՆԱՐԱԳԵՏՅԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Ց. ԳՈՒՐԳԵՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՔՈՒԶԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ. և ծաղկաստ.:
Խ. Դ. ԱՐԵԱՆՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Վճարը 50 կ. չքաւորները ձրի: Համաձայնվելի (կօնսիլիումներ) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատօր Մոսկվայի համալսարանի կլինիկայի

Վերսկսեց ընդունելութիւնը՝ յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին: Ընդունելութիւնը ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան: Ռուշչևսկայա փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տելէֆօն № 11.
(ա. օ.) 13—20

ԷԼԷԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
Բժիշկ Միխայել Գեդևանօվի

Ջղային հիւանդների ընդունելութիւնը Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը, Երեկոյեան ժամի 6-ից—7-ը, Կօրգանօվսկայա փող. № 20 Վերայում: Սեփական տ., տելէֆօն № 791: (ա. օ.) 76—150

ԲԺԻՇԿ Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Ընդունում է մասնաւորապէս սիֆիլիս, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկևիչա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա. օ.) 44—100

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան

Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլօվինսկի պրօսպէկտի և Կադետսկայա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կադետսկի փողոցից № 2,
(ա. օ.) 100—300

ԲԺՇԿԱՊԵՏ
Բ. Նաւասարդեան

Վերադարձաւ և ստանձնելով իր «ԱՌԱՋԻՆ Մ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԸ», վերսկսեց բժշկական գործունէութիւնը: 60—100

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8: (և. ո.) 47—28

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միզային և սիֆիլիսական հիւանդութիւնների վերադարձել է արտասահմանից և ընդունում է հիւանդներին ցերեկվայ 12—1 ժամը, իսկ երեկ. 6-ից մինչև 8-ը: Կուկիա Սեմեօնովսկի փողոց № 20:
(ա. օ.) 1—10

Փարգիտ գիւղացի (Կարսի գաւառ)
ԵՐՈՒԱՆԴ ՔՈՉԱՐԵԱՆ ՄԿՐՏՉԵԱՆԸ

չորս ամիս սրանից առաջ հեռացել է գիւղից և այնուհետև չի վերադարձել. խնդրում եմ նրա մասին որ և է տեղեկութիւն ունեցողին յայտնել ինձ նրա ուր լինելը հետևեալ հասցէով ст. Бешъ-Кядикляръ, сел. Паргитъ Кочару Микиртичеву. 1—2

Վրաստանի և Իմերէթի հայոց վիճակային կոնսիստորիայի Ատենի մէջ նշանակված է աճուրդ այս ամսի մարտի 8-ին, առանց կրկնաճրդի, կապալով տալու եկեղեցական կղզին, որ գտնում է Վանքի աւագ եկեղեցու հանդէպ: Աճրդին մասնակցել ցանկացողները պիտի ներկայացնեն պահանջած գրաւական:
Անդամ կոնսիստորիայի՝
1—2 Զաքարիա քահ. Զարդեղեանց

Հավլաբարի թատրօնի, (նախկին Արաքսեանի) հայ և վրաց թատերասէրների ընկերութեան ժողովրդական ներկայացումների համար կազմակերպվում է ասիական և եւրոպական ԵՐԿՈՒ ՄՇՏԱԿԱՆ-ԵՐԱԺՇՏԱԽՈՒՄԲ, Գ. Ա. ՄԱՅԻԼԵԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ, որի համար հրաւիրվում են նուագողներ՝ ջութակի, ֆլէյտայի, կլարնետի, կօրնետի, մանդոլինայի, գիտարի, դափի, թառի և քամանչայի վրա: Ցանկացողները թող շտապեն իրանց հասցէները և պայմանները յայտնելու պ. Ա. Մայիլեանցին՝ առաւօտեան ժամի 10-ից մինչև 2-ը Զգրաշէնի դպրոցում, իսկ երեկոները ժամի 2½-ից—5½-ը—(Հավլաբար, Կոտլեարևսկի փողոց, պրոգիմնազիայի մօտ, սեփ. տուն), կամ երեկոյեան ժամի 6-ից—8-ը Գ. Փիրումեանին՝ թատրօնում: 2—2

ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ժամերը հաշուած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը Թիֆլիսի ժամանակով):

	Պօստային	Մարդատար.	Արագ.	Ապրանք.
Բագուից դուրս գալը	4 ժ. 53 ր. ցեր.	11 ժ. 03 ր. ցեր.	12 ժ, 20 ր. գիշ.	4 ժ. 08 ր. գիշ.
Թիֆլիս հասնելը	11 » 10 » »	5 ժ. 31 ր. առ.	1 ժ. 30 ր. ցեր.	9 ժ. 30 ր. գիշ.
Թիֆլիսից դուրս գնալը	11 » 55 » »	6 ժ. 07 ր. առ.	—	—
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 53 » »	7 ժ. 05 ր. առ.	—	—
Բաթում հասնելը	1 » 14 ր. գիշ.	7 ժ. 07 ր. եր.	—	—
Բաթումից դուրս գալը	5 » 15 » »	5 ժ. 24 ր. ցեր.	—	—
Թիֆլիս հասնելը	6 » 11 ր. եր.	6 ժ. 44 ր. առ.	—	—
Թիֆլիսից դուրս գալը	6 » 58 » »	7 ժ. 48 ր. առ.	5 ժ. 35 ր. ցեր.	10 ժ. 40 ր. գիշ.
(Թիֆլիսի ժամանակով)	7 » 56 » »	8 ժ. 46 ր. առ.	6 ժ. 33 ր. ցեր.	11 ժ. 38 ր. գիշ.
Բագու հասնելը	1 » 20 ր. ցեր.	12 ժ. 42 ր. գիշ.	6 ժ. 19 ր. առ.	3 ժ. 55 ր. ցեր.
Երևանից դուրս գալը	12 » 02 » »	—	—	11 ժ. 26 ր. գիշ.
Կարսից » »	3 » 57 » »	—	—	3 ժ. 15 ր. գիշ.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	7 » 38 ր. եր.	—	—	7 ժ. 06 ր. առ.
Թիֆլիս հասնելը	5 » 10 » առ.	—	—	4 ժ. 48 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը	11 » 22 » գիշ.	—	—	1 ժ. 13 ր ցեր.
(Թիֆլիսի ժամանակով)	12 » 20 » »	—	—	2 ժ. 11 ր. ցեր.
Ալէքսանդրօպօլից դուրս գալը	10 » 15 » առ.	—	—	12 ժ. 50 ր. գիշ.
Կարս հասնելը	1 » 55 » ցեր.	—	—	4 ժ. 24 ր գիշ.
Երևան հասնելը	4 » 21 » »	—	—	6 ժ. 48 ր. առ.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1906 թ.
„ՄՈՒՐՃ“
ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
(Նոր շրջան VI տարի)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ
Ռուսաստան և Պարսկաստան—տարեկան 10 ր., կէս տարին 6 ր.,
Արտասահման—տարեկան 12 ր. (32 ֆ.), կէս տարին 7 ր., (18 ֆ.),
ՀԱՏՈՎ ՀԱՄԱՐԸ ՄԻ ՌՈՒԲԼԻ

Ծանօթութիւն. Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս. սկզբում 5 ր., մայիսի 1-ին 3 ր. և յունիսի 1-ին 2 ր.—կամ սկզբում 5 ր. և յունիսի 1-ին 5 ռուբլի: Հայոց դպր. վարժուհիների և ուսուցիչների, գիւղական քահանաների, միջն. ուս. աշակերտների և ուսանողների համար բաժանորդագինն է 8 ռուբլի Ռուսաստանում: Թիֆլիսի բաժանորդները կարող են տարեկան բաժանորդագինը (10 ր.) վճարել մաս-մաս, բաժանելով այնպէս, ինչպէս իրանց յարմար է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է
Թիֆլիսում—խմբագրատանը (Ճավճավաձեան փողոց տ. № 12):
Կայսրութեան այլ տեղերից պէտք է դիմել Тифлисъ, Въ редакцію журнала „Мурчъ“. Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la revue «Murtch».
«Մուրճի» գործակալներ.
Աստրախան—Գ. ք. Մկրտումեան:
Բագու—բժ. Գ. Սարգսեան, (Б. Морск. д. № 26) և «Сотрудникъ» գրավ.
Բալախանի—բժ. Ք. Օհանեան:
Բիբի-Էյբաթ—պ. Դ. Տէր-Դանիէլեան:
Երևան—«Արարատ» գրախանութ.
Կարս—պ. Համազասպ Տ.-Խաչատրեան:
Մոսկվա—պ. Ստ. Թումեան.
Սօչի—պ. Արամ Յակոբեան (Սևծովեզերեայ շրջան):
Սամարկանդ—Ռ. ք. Բէկգիւլեան (Անդրկասպեան երկիր):
Սիմֆերոպոլ—պ. Նիկ. Հայրապետեան:
Թիֆլիս—«Գուտտենբերգ», «Կենտրոն.», «Զ. Գրիգոր. գրավ. և «Հերմէս» տպ.
Վլադիկաւկազ—Յ. ք. Սաւրեան (Հիւս. Կովկասի համար):
Թաւրիզ—Բժ. պ. Յ. Տէր-Ստեփանեան և պ. Հ. Պանիրեան:
Եգիպտոս—դօկտոր Կ. Փաշայեան-Խան (Ալէքսանդրիա):
Էնզէլի—պ. Գ. Մէլիք-Աբրահամեան:
Նոր-Ջուղա—պ. Տիգրան Աբգարեան:
Թէհրան—պ.պ. Ալէքսան Թումեանց և Լ. Բաբայեան:

1906 թւականի նոր բաժանորդները կը ստանան 1905 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների «Մուրճ» ձրիաբար: 10—10

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
1906 թ.
„ԱՇԽԱՏԱՆՔ“
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԳԻՒՂԱԿԱՆ
ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
ՈՐԸ ԴՈՒՐՍ Է ԳԱԼՈՒ ԱՌԱՋԻԿԱՅ 1906 Թ ՅՈՒՆՎԱՐԻ ՄԷԿԻՑ

Ծրագիր՝ 1) Առաջնորդող յօդուածներ քաղաքատնտեսական ժամանակակից խնդիրների մասին. 2) Գիւղական կեանք և կարիքներ. 3) Գիւղական տնտեսութիւն և տեխնիկա. 4) Զեմստվօ և համայնք. 5) Գիւղական դպրոց, դատարան և ոստիկանութիւն. 6) Գիւղական պրոլետարիայի շուրջը. 7) Առողջապահութիւն և անասնաբուժութիւն. 8) Թղթակցութիւններ գաւառից. 9) Մամուլի շուրջը. 10) Պատկերներ և զրոյցներ. 11) Հարցեր և պատասխաններ. 12) Շուկայ և տեղեկատու և 13) Յայտարարութիւններ:

«Աշխատանքը» նուիրված է լինելու հայ գիւղացիութեան և նրա միջից դուրս եկած պրոլետարիատի շահերին և կարիքներին:

Գաւառի և գիւղի հետ սերտ և կենդանի յարաբերութիւններ հաստատելը «Աշխատանքի» ձգտումն է:

Ուսուցիչները, գիւղական քահանաները և գիւղական ինտելիգենցիան «Աշխատանքի» թղթակիցներն ու կենդանի ոյժերն են լինելու:

«Աշխատանքին» աշխատելու հրաւիրված են որոշ ուղղութեան մարդիկ:

«Աշխատանքը» վարձատրելու է իր բոլոր մշտական աշխատակիցներին և գաւառական թղթակիցներին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ

Ռուսաստանի համար տարեկան՝ 4 ռուբ. —	Արտասահմանի համար տարեկան 5 ռուբ. —
կէս տարին 2 » —	կէս տարին 2 » 50 կ.
ամիսը — — 40 կ.	ամիսը — — 50 »
հատով №-ը — — 10 »	հատով №-ը — — 15 »

Բաժանորդագինը կարելի է վճարել մաս-մաս. սկզբում 2 ռուբլի, մայիսին՝ 1 ր. սեպտեմբերին՝ 1 ռուբլի.

1906 թւականի այն բաժանորդները, որոնք կը գրվեն մինչև այս տարվայ դեկտ. 20-ը վճարելով տարեկան ամբողջ բաժանորդագինը միանուագ, կը ստանան իբրև պրեմիա «Իրաւական պետութիւն» յայտնի գիրքը—80 երեսից:

«Աշխատանքի» բաժանորդագինը ընդունվում է Թիֆլիսում խմբագրատան մէջ, իսկ քաղաքներում նաև բոլոր գրավաճառների մօտ:

Հասցէն՝ Тифлисъ, въ редакцію еженедѣльнаго журнала „Ашхаданкъ“, Бебутовская ул. д. № 27: Արտասահմանից՝ Tiflis, rédaction de la revue «Aschchatank», Bebutovskaia 27.
Խմբագիր-հրատարակիչ՝ Աշոտ Ասրանեան
(և. ո.) 12—12

ԳԷՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ մասնագիտական բաժինը աւարտած
ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ցանկանում է ունենալ դասեր դպրոցներում, կամ ընտանիքներում, բոլոր առարկաներից: Հասցէն՝ Николаевскій мостъ, писче-бумажный магазинъ С. Матинянца. 5—5

ԼԷՕ
Ս. ՄԵՍՐՈՊ
(Հայ տառերի գիւտի 1500-ամեակի առիթով)
336 երես, գինը 75 կոպ.:
Դիմել՝ «Գուտտէմբերգ» գրախանութը, Թիֆլիս. Նոյն տեղից կարելի է ձեռք բերել ամեն տեսակ դասական և ընթերցանութեան գրքեր.

Съ 1-го марта 1906 года
начнетъ выходить въ С.-Петербургѣ ежедневная
политическая, экономическая и общественная газета
„СТРАНА“
подъ редакціей Максима Ковалевскаго и проф. И. Иванюкова
Девятнадцатаго февраля выйдетъ номеръ газеты, посвященной оцѣнкѣ главныхъ теченій русской мысли и жизни послѣ историческаго дня.
Подписка принимается съ 1-го Марта 1906 года,
УСЛОВІЯ ПОДПИСКИ:

Съ доставк. и перес. въ	12 м.	11 м.	10 м.	9 м.	8 м.	7 м.	6 м.	5 м.	4 м.	3 м.	2 м.	1 м.
Спб. и Россіи	12 р.	11 р.	10 р.	9 р.	8 р.	7 р.	6 р.	5 р.	4 р.	3 р.	2 р. 20 к.	1 р. 10 к.
За границу	24 »	22 »	20 »	18 »	16 »	14 »	12 »	10 »	8 »	6 »	4 » —	2 » —

Для учащихся въ высшихъ учебныхъ заведеніяхъ, сельскихъ священниковъ, учителей и учительницъ: на годъ—8 р., 10 мѣс.—7 руб., 6 мѣс.—4 руб., 3 мѣс.—2 р. 25 к., 2 мѣс.—1 р. 50 к. и 1 мѣс.—80 коп.
Подписка принимается въ главной конторѣ газеты
«СТРАНА», Невскій, 65, ежедневно отъ 10 до 5 час. дня. 3—3

---

*) Յօդուածիս չը վերաբերեալ մի դառն նկատողութիւն այս կտորի առիթով: Արժանայիշատակ Ներսէս Վարժապետեանի Եւրոպան այն աստիճան էր ծանօթ հայերի հետ, որ անգամ տեղեակ չէին նրա քրիստոնեայ կամ մահմեդական լինելը: Այժմ Նիտտին իր գիտնական գրքում ֆինանսական հարցերում օրինակներ է բերում բազմաթիւ անգամ, հայերի կեանքից: Ո՞ւր պ. Նիտտին. Նորերս աչքիս ընկաւ չինական առաջին յեղափոխական առաջադէմ ազգասէրի յիշատակարանը ուր նա իր մտքերը լուսաբանում է հայի քաղուածներով: «Ազգերնիս կը յառաջադիմէ կոր».... Պ. Զ.

Տպարան «ՀԵՐՄԵՍ» ընկ.
Элекропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15